Դավիթ Գյուրջինյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ

9-րդ դասարանի
ավարտական քննությանը
պատրաստվելու համար

Դավիթ Գյուրջինյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ

9-րդ դասարանի ավարտական քննությանը պատրաստվելու համար

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ՀՏԴ 373.1:811.19
ԳՄԴ 74.2+81.2Հ
Գ 990

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության
նախարարության կողմից որպես ուսումնաօժանդակ նյութ

Գ 990 **Գյուրջինյան Դ.,**
Հայոց լեզվի ամփոփիչ հարցարաններ: 9-րդ դասարան/
Դ. Գյուրջինյան.- Եր.: Էդիթ Պրինտ

ՀՏԴ 373.1:811.19
ԳՄԴ 74.2+81.2Հ

ISBN 978-9939-75-018-7

© Գյուրջինյան Դավիթ,
© Էդիթ Պրինտ հրատարակչություն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի հարցարանների այս նոր ժողովածուն մեծապես կնպաստի հիմնական դպրոցի ավարտական (9-րդ դասարանի) քննությանը նախապատրաստվելուն, գիտելիքներն ամփոփելուն, նաև նոր գիտելիք, ինչպես և անհրաժեշտ փորձ ձեռք բերելուն:

Հարցարանները տեքստային են. դրանցից յուրաքանչյուրի հիմք է դարձել գրական որևէ ստեղծագործության ընդամենը մեկ էջ: Լեզվական տեսանկյունից մանրազնին ուսումնասիրվում է բնագրի յուրաքանչյուր հատված կամ պարբերություն:

Ներկայացվում են տարատեսակ առաջադրանքներ հայոց լեզվի տարբեր բաժիններից՝ հնչյունաբանություն, ուղղագրություն և ուղղախոսություն, բառագիտություն և բառակազմություն, ձևաբանություն, շարահյուսություն, որոշ չափով՝ ոճաբանություն և խոսքի մշակույթ (որչափ նախատեսված է դպրոցական ծրագրով և մատուցված է հայոց լեզվի դասագրքերում՝ սկսած 5-րդ դասարանից):

Հարցարանները նախատեսված են ինչպես ուսուցչի ղեկավարությամբ դասարանում, այնպես էլ ինքնուրույնաբար տանը կատարելու համար: Սրանք առավելապես ուսուցողական նպատակ են հետապնդում, բայց մասնակիորեն կարող են ծառայել նաև ստուգողական գրավոր աշխատանքների համար (ըստ ուսուցչի հայեցողության):

Հարցարանները կազմվել են գերազանցապես սովորեցնելու և աշակերտների ձեռք բերած գիտելիքներն ամրապնդելու և ամփոփելու նպատակադրմամբ, դրա համար էլ գնահատման չափանիշներ չեն տրվում: Դա ըստ նպատակահարմարության կարող է անել ուսուցիչը, եթե որոշի հարցարանի այս կամ այն մասը ծառայեցնել աշակերտների գիտելիքներն ստուգելու գործին:

Այս հարցարաններով աշխատելու ժամանակային սահմանափակում չի նախատեսվում. առաջադրանքները կարելի է անշտապ, հանգամանալից և վերլուծելով, քննարկելով կատարել մի շարք դասաժամերի ընթացքում: Կարևորը գիտելիքի ամրապնդումն է, դպրոցական ուսումնառության այդ փուլի հաջող ամփոփումը:

Հուսով ենք, որ այս ձեռնարկով աշխատելու շնորհիվ իններորդ դասարանի աշակերտները ոչ միայն հաջողությամբ կհանձնեն ավարտական քննությունը, այլև կխորացնեն հայոց լեզվից իրենց ունեցած գիտելիքները:

Դավիթ Գյուրջինյան

Հարցարան 1

1. Մի երեկո էլ՝ սովորական ժամին, պատանի երաժիշտը, ապարանքի բարձր պատուհանի տակ կանգնած, իզուր աշխատում էր իր դյութական հնչյուններով դուրս կանչել հավերժահարսին:

Պատուհանը փակ էր:

Պատանի արտիստը, սակայն, չէր հուսահատվում. ջութակը մերթ կանչում էր հրամայաբար, մերթ խնդրում աղերսագին, մերթ խոսում լալագին, մերթ հառաչում ու լալիս հուսահատորեն:

Պատուհանը միշտ փակ էր:

2. Այնուհետև, երբ ջութակն իր հուսահատական վեր...ին ճիչերն էր ար...ակում, պատուհանի մի փե...կը կիսով չափ բացվեց, նախ մի դրամ զրնգաց գետնին, և ապա թ...թի մի կտոր, օ...ի մեջ պտտվելով, ցած ընկավ պատանի երաժշտի ոտների առջև:

Թու...թը վերցրեց և կար...աց.

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու՝ ներ...ևը, էլ մի գա: Մոռացիր ինձ»:

3. Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, հետո ցնցվեց ուժգնորեն, մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը, թու...թը, ցասումով լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց իրեն, խնամքով ծալեց, ծոցը դրեց, ոտով դեն շպրտեց գետնին ընկած դրամը և ջութակը պինդ սեղմելով վիրավոր կրծքին՝ հեռացավ՝ անարգանքի կսկիծը հպարտ սրտի մեջ պարուրած:

Այդ օրվանից Վենեցիայի փողոցներում էլ ոչ ոք չտեսավ հանրածանոթ պատանի ջութակահարին:

Նար-Դոս, «Ես և նա»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Բնագրի ստորոգյալները ո՞ր ժամանակաձևերով են դրվել: Նշիր առնվազն երկուսը:*

ա) _____

բ) _____

2. *Քո վերաբերմո՛ւնքն արտահայտիր աղջկա երկտողի նկատմամբ:*

_____

_____

_____

_____

_____

3. *Փոխիր դեպքերի ընթացքը, հատկապես երկտողի բովանդակությունը:*

_____

_____

_____

_____

_____

4. *Գրիր քեզ հարազատ մի մեղեդու մասին:*

_____

_____

_____

_____

_____

_____

Առաջին հատվածին վերաբերող առաջադրանքներ

1) Մի երեկո էլ՝ սովորական ժամին, պատանի երաժիշտը, ապարանքի բարձր պատուհանի տակ կանգնած, իզուր աշխատում էր իր դյութական հնչյուններով դուրս կանչել հավերժահարսին:

2) Պատուհանը փակ էր:

3) Պատանի արտիստը, սակայն, չէր հուսահատվում. ջութակը մերթ կանչում էր հրամայաբար, մերթ խնդրում աղերսագին, մերթ խոսում լալագին, մերթ հառաչում ու լալիս հուսահատորեն:

4) Պատուհանը միշտ փակ էր:

5. *Ո՞ր բառում գաղտնավանկ չկա:*

☐ բարձր ☐ հնչյուն
☐ հավերժահարս ☐ խնդրել

6. *Հայերենի ո՞ր ձայնավորը չկա 4-րդ նախադասության մեջ:*

.....

7. *Բնագրում* **իզուր** *բառը ո՞ր նշանակությամբ է գործածվել:*

☐ անտեղի ☐ ապարդյուն
☐ անհիմն ☐ հանիրավի

8. *Ճիշտ է, որ* **ապարանք** *նշանակում է «շքեղ տուն, պալատ»:*

☐ այո ☐ ոչ

9. **Հուսահատվել** *բառին ո՞րը հոմանիշ չէ:*

☐ հուսալքվել ☐ հուսաբեկվել
☐ տարտամել ☐ վհատվել

10. *Այս բառերից ո՞րը երաժշտական գործիք չի նշանակում:*

☐ քնար ☐ կթղա
☐ տավիղ ☐ ծնծղա

11. *Կազմիր տրված գոյականների հոգնակի թիվը:*

ա) **երաժիշտ** .....

բ) **պատանի** .....

գ) **ապարանք** .....

դ) **պատուհան** .....

12. *Բնագրում գործածված բառերից որի ձևաբանական վերլուծությունն է սխալ:*

☐ **մի** – անորոշ դերանուն ☐ **էլ** – ժամանակի մակբայ

☐ **միշտ** – ժամանակի մակբայ ☐ **հուսահատորեն** – ձևի մակբայ

13. *Ո՞ր ձևն է սխալ:*

☐ խոսած ☐ խոսա՛

☐ խոսող ☐ մի՛ խոսեք

14. *Ձևաբանորեն վերլուծիր երրորդ նախադասության մեջ կապույտ գրվածները:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

15. *Առաջին նախադասության մեջ կապույտ գրվածները նախադասության ինչ անդամներ են:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

16. *Ո՞րերորդ նախադասության կազմությունն է սխալ ներկայացված:*

☐ 1) – բարդ ստորադասական նախադասություն

☐ 2) – պարզ համառոտ նախադասություն

☐ 3) – բարդ համադասական նախադասություն

☐ 4) – պարզ ընդարձակ նախադասություն

Երկրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Այնուհետև, երբ ջութակն իր հուսահատական վեր...ին ճիչերն էր ար...ակում, պատուհանի մի փե...կը կիսով չափ բացվեց, նախ մի դրամ զրնգաց գետնին, և ապա թ...թի մի կտոր, օ...ի մեջ պտտվելով, ցած ընկավ պատանի երաժշտի ոտների առջև:

Թու...թը վերցրեց և կար...աց.

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու՝ ներ...ևը, էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»:

17. *Վերևի հատվածում լրացրո՛ւ կապույտ գրված բառերի բաց թողնված տառերը:*

18. *Որտեղ ձայնավորի կամ երկհնչյունի հնչյունափոխություն չկա:*

☐ հուսահատական ☐ կիսով
☐ գետնին ☐ պտտվելով
☐ երաժշտի ☐ անդունդ

19. *Այստեղ գործածված* **անանց** *բառն ինչ է նշանակում:*

☐ անամոք ☐ անանցանելի
☐ հավերժական ☐ հավիտենական

20. *Ճիշտ է, որ* **վիհ** *և* **խորխորատ** *բառերը հոմանիշ են* **անդունդ**-*ին:*

☐ այո ☐ ոչ

21. *Հատվածից հականիշների մեկ զո՛ւյգ դուրս գրիր:*

.....

22. *Ինչ է նշանակում այս հատվածի վերջին նախադասության* **էլ**-*ը:*

☐ ևս ☐ այլևս

23. *Հատվածում գործածված առաջին* **մի**-*ն ինչ է:*

☐ քանակական թվական ☐ անորոշ դերանուն

24. *Լրացրո՛ւ հատվածից դուրս գրված անձնական դերանուններով:*

ա) ուղղական հոլով .....

բ) սեռական հոլով.....

գ) հայցական .....

25. *Տրված բայերից ո՞րը չեզոք սեռի չի պատկանում:*

☐ բացվեց ☐ զրնգաց ☐ ցած ընկավ ☐ վերցրեց

26. *Ո՞ր բայաձևն է սխալ:*

☐ ասա՛ ☐ ասացե՛ք ☐ ասեցինք ☐ ասեինք

27. *Հատվածից դո՛ւրս գրիր հրամայական եղանակի ձևերը:*

ա) դրական խոնարհում.....

բ) ժխտական խոնարհում.....

28. *Հրամայական եղանակի ժխտական խոնարհումն ինչ է կոչվում:*

.....

29. *Հատվածում ուրիշի անուղղակի խոսք կա՞:*

☐ այո ☐ ոչ

30. *Կապույտ գրվածները նախադասության կառուցվածքային ինչ միավորներ են:*

ա) .....

բ) .....

31. *Ուղղակի խոսքում ինչո՞ւ է բութ դրվել:*

.....

Երրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, հետո ցնցվեց ուժգնորեն, մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը, թուղթը, ցասումով լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց իրեն, խնամքով ծալեց, ծոցը դրեց, ոտով դեն շպրտեց գետնին ընկած դրամը և ջութակը պինդ սեղմելով *վիրավոր* կրծքին՝ հեռացավ՝ անարգանքի կսկիծը հպարտ սրտի մեջ *պարուրած*:

Այդ օրվանից Վենեցիայի փողոցներում էլ ոչ ոք չտեսավ հանրածանոթ պատանի ջութակահարին:

32. *Փակագծերը հանելով՝ գրիր գծիկով կամ առանձին:*

ա) **թև (թևի)** .....

բ) **(փողոցից) փողոց** .....

գ) **(կաս) կարմիր** .....

դ) **(առոք) փառոք** .....

33. *Ինչ է նշանակում* **առժամանակ** *բառը*

☐ անժամանակ ☐ որոշ ժամանակ

☐ մինչև մեկ ժամ ☐ մինչև այս ժամանակը

34. **Կայծայնացայտ հայացք** *բառակապակցության մեջ* **կայծայնացայտ**-*ն ինչ իմաստով է գործածվել:*

☐ ուղիղ (կայծակ ցայտեցնող)

☐ փոխաբերական (բարկություն արտահայտող)

35. **Կայծայնացայտ** *և* **շանթահար** *բառերի առաջին բաղադրիչներն իմաստային ինչ առնչություն ունեն:*

.....

36. *Կարո՞ղ ենք ասել, որ* **տեղնուտեղը** *բառն առաջին նախադասության մեջ նշանակում է «հենց նույն տեղում»:*

☐ այո ☐ ոչ

37. *Տրվածներից ո՞րը հոմանիշ չէ* **ցասում** *բառին:*

☐ բարկություն ☐ մոլեգնություն
☐ կատաղություն ☐ տրտմություն

38. *Ո՞րն է ավելի ուժգին բարկություն:*

☐ ցասում ☐ զայրույթ

39. *Ինչ են կոչում*

ա) թավջութակ նվագողին .....
բ) սրինգ նվագողին .....
գ) դաշնամուր նվագող կնոջը .....
դ) տավիղ նվագող կնոջը .....

40. *ա) Կապույտ գրվածներն ինչ են:*

.....

բ) Նախադասության մեջ կապույտ գրվածներն ինչ պաշտոն ունեն:

.....

41. *Չնաբանորեն վերլուծիր շղատառ կապույտ գրվածները:*

ա) .....
բ) .....

42. *Քանի բաղադրիչ նախադասություններից է բաղկացած առաջին նախադասությունը:*

.....

43. **Ոչ մեկ** *չտեսավ* **ջութակահարին** *նախադասության* **ոչ մեկ** *ձևը ճիշտ է արդյոք:*

☐ այո ☐ ոչ

44. *Ո՞ր ձևն է ճիշտ:*

☐ կիթառի վրա նվագել ☐ կիթառ նվագել

Հարցարան 2

1. Փոթորկային գիշերին հաջորդեց գարնանային խաղաղ, հովասուն առավոտը: Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով: Սար ու ձոր, դար ու դաշտ պատված էր անթափանց մառախուղով: Օդի մեջ լողացող ջրային շիթերը արեգակի առաջին ճառագայթներից վառվում էին միլիոնավոր ոսկյա հուլունքների նման: Ծառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների նախշուն ծաղիկները, ցողված անձրևային կաթիլներով, կարծես սփռված լինեին գույնզգույն գոհարներով:

2. Այդ գեղեցիկ առավոտը հիշեցնում էր այն վաղեմի հանդիսավոր առավոտներից մեկը երբ Աստղիկը Տարոնի դիցուհին դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից և շրջապատված յուր անթառամ նաժիշտներով իջնում էր Քարքե լեռան բարձրություններից Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու: Այդ միջոցին հայոց երիտասարդ դյուցազունները թաքնվում էին Աշտիշատի դիցանվեր անտառի մթին ծառաստանի մեջ՝ հեռվից դիտելու գեղեցիկ աստվածուհու լոգարանը: Բայց Աստղիկը Մուշի ամբողջ դաշտը վարագուրում էր մառախլապատ մշուշով և յուր լոգարանը անտեսանելի դարձնում:

3. Վաղոր....յան մառախուղը հետզհետե նոսրանում էր, նր....անում, որքան արեգակը բար....բանում էր հորիզոնի վրա: Այժմ մշուշի միջից՝ որպես թափանցիկ շղարշի միջից, սկսեցին նկարվել հեռավոր պատկերները: Երևում էր Սիմ լեռան կանաչազար.... շ....թան՝ մեղմ ալիքներով և ձյունապատ գագաթներով, որոնք արևի ճառագայթների առջև փայլում էին վար....ագույն ներկով: Իսկ ավելի հեռու՝ դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը, մանուշակագույն ժապավենի նման երևում էր Բզնուն....աց ծովակի միայն նեղ շերտը:

Ռաֆֆի, «Սամվել»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Բնագրում գործածված ո՞ր բառի բացատրությունն է սխալ:*

☐ **հովասուն** – զով
☐ **նաժիշտ** – աղախին, սպասուհի
☐ **դյուցազուն** – աստվածների ցեղից սերած, առասպելական հերոս
☐ **դիցանվեր** – աստվածանվեր, աստվածաշնորհ
☐ **վաղորդյան** – վաղ առավոտ

2. *Ո՞րերորդ պարբերության մեջ է մառախուղը թանձր:*

_____

3. *Բոլոր պարբերություններում հատուկ անուն կա՞:*

☐ այո ☐ ոչ

4. *Նկարագրիր քո բնակավայրի առավոտը:*

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Առաջին պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

1) Փոթորկային գիշերին հաջորդեց գարնանային խաղաղ, հովասուն առավոտը: 2) Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով: 3) Սար ու ձոր, դար ու դաշտ պատված էր անթափանց մառախուղով: 4) Օդի մեջ լողացող ջրային շիթերը արեգակի առաջին ճառագայթներից վառվում էին միլիոնավոր ոսկյա հուլունքների նման: 5) Ծառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների նախշուն ծաղիկները, ցողված անձրևային կաթիլներով, կարծես սփռված լինեին գույնզգույն գոհարներով:

5. *Ո՞ր բառի գրությունը չի համապատասխանում արտասանությանը:*

☐ հաջորդել ☐ ծառազարդ
☐ արեգակ ☐ առաջին

6. *Բառակազմական տեսակետից ո՞րն է անհամապատասխան* **հովասուն** *բառին (այսինքն՝* **սուն** *արմատ չունի):*

☐ զովասուն ☐ անասուն
☐ ձեռնասուն ☐ սիրասուն

7. *Համանուն ո՞ր* **դարն** *է գործածվել այս հատվածում:*

☐ **դար** – հարյուր տարի
☐ **դար** – զառիվայր բարձրություն

8. *Դո՛ւրս գրիր* **-ային** *վերջածանցով կազմված բառերը, յուրաքանչյուրի դիմաց՝ այն բառերը (արմատները), որոնցից կազմվել են:*

ա) .....
բ) .....
գ) .....
դ) .....

9. *Բառերի ո՞ր զույգը բաղկացած չէ հոմանիշներից:*

☐ առավոտ - ծեգ ☐ մխալ - ծխալ
☐ արեգակ - արփի ☐ գոհար - զմրուխտ

10. *Ո՞ր բառը հոմանիշ չէ* **մառախուղ** *բառին:*

☐ մեգ ☐ շամանդաղ
☐ մշուշ ☐ աղջամուղջ

11. *Ո՞ր բառի ձևաբանական բնութագիրն է սխալ տրված:*

☐ **պես** – կապ, հետադրություն
☐ **առաջին** – դասական թվական
☐ **միլիոնավոր** – քանակական թվական
☐ **կարծես** – երկբայական վերաբերական

12. *Ո՞րերորդ նախադասության մեջ է ենթական հաջորդում ստորոգյալին:*

.....

13. *Ո՞ր նախադասություններում կան՝*

ա) բազմակի ենթականեր .....
բ) բազմակի որոշիչներ .....

14. *3-րդ նախադասության մեջ* **մառախուղով**-*ն ինչ անդամ է:*

☐ միջոցի անուղղակի խնդիր ☐ ուղիղ խնդիր
☐ ներգործող անուղղակի խնդիր ☐ ձևի պարագա

15. *Ո՞ր պատասխանն է ճիշտ:*

Պարբերության նախադասություններից պարզ են՝

☐ 1, 2 ☐ 1, 2, 3
☐ 1, 2, 3, 4 ☐ 1, 2, 3, 4, 5

16. *Պարբերությունից դո՛ւրս գրիր համեմատությունները:*

ա) .....
բ) .....

Երկրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Այդ գեղեցիկ առավոտը հիշեցնում էր այն վաղեմի հանդիսավոր առավոտներից մեկը երբ Աստղիկը Տարոնի դիցուհին դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից և շրջապատված յուր անթառամ նաժիշտներով իջնում էր Քարքե լեռան բարձրություններից Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու: Այդ միջոցին հայոց երիտասարդ դյուցազունները թաքնվում էին Աշտիշատի դիցանվեր անտառի մթին ծառաստանի մեջ՝ հեռվից դիտելու գեղեցիկ աստվածուհու լոգարանը: Բայց Աստղիկը Մուշի ամբողջ դաշտը վարագուրում էր մառախլապատ մշուշով և յուր լոգարանը անտեսանելի դարձնում:

17. *Կետադրիր վերևի պարբերության կապույտ գրված նախադասությունը:*

18. *Բառի ո՞ր արտասանությունն է ճիշտ:*

☐ թաքՒնվել ☐ թաքՆՒվել

19. *Ո՞ր բառում հնչյունափոխություն չկա:*

☐ հանդիսավոր ☐ ծառաստան
☐ բարձրություն ☐ վարագուրել

20. *Ճիշտ է արդյոք, որ* **լոգարան** *բառը բնագրում նշանակում է «գետում, լճում, ծովում լողանալու համար հատուկ պատրաստված տեղ»:*

☐ այո ☐ ոչ

21. **Դաշտը վարագուրում էր մշուշով** *միտքն ինչպես կբացատրես:*

.....

.....

22. **Յուր** *հնացած դերանունը ո՞ր ձևով կփոխարինես:*

☐ իր ☐ նրա

23. *Ո՞րը հոմանիշ չէ* **գեղեցիկ** *բառին:*

☐ գեղանի ☐ դշխուհի
☐ գողտրիկ ☐ չնաշխարհիկ

24. **Հիշեցնում էր** *բայը կազմությամբ ինչպիսին է:*

☐ սոսկածանցավոր ☐ կրավորական
☐ բազմապատկական ☐ պատճառական

25. *Պարբերության նախադասությունների բոլոր ստորոգյալները ո՞ր ժամանակաձևի բայեր են:*

☐ անցյալ կատարյալ ☐ անկատար անցյալ
☐ վաղակատար անցյալ ☐ ըղձական անցյալ

26. *Եթե* **ծառաստանի մեջ** *ասելու փոխարեն ասվեր* **ծառաստանում**, *ճիշտ կլիներ:*

☐ այո ☐ ոչ

27. *Յուրաքանչյուր բառի դիմաց գրիր դերանվան տեսակը:*

ա) **այդ** .....
բ) **երբ** .....
գ) **ամբողջ** .....

28. *Նախադասության մեջ ինչ պաշտոն ունեն հետևյալ դերբայական դարձվածները՝* **Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու** *և* **հեռվից դիտելու գեղեցիկ աստվածուհու լոգարանը:**

☐ պատճառի պարագա ☐ ձևի պարագա
☐ նպատակի պարագա ☐ հիմունքի պարագա

29. *Դո՛ւրս գրիր բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունը:*

.....

Երրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Վաղոր....յան մառախուղը հետզհետե նոսրանում էր, նր....ա-նում, որքան արեգակը բար....բանում էր հորիզոնի վրա: Այժմ մշուշի միջից՝ որպես թափանցիկ շղարշի միջից, սկսեցին նկարվել հեռավոր պատկերները: Երևում էր Սիմ լեռան կանաչազար.... շ....թան՝ մեղմ ալիքներով և ձյունապատ գագաթներով, որոնք արևի ճառագայթնե-րի առջև փայլում էին վար....ագույն ներկով: Իսկ ավելի հեռու՝ դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը, մանուշակագույն ժապավենի նման երևում էր Բզնուն....աց ծովակի միայն նեղ շերտը:

30. *Լրացրո՛ւ վերևի պարբերության կապույտ գրված բառերի բաց թողնված տառերը:*

31. *Յուրաքանչյուր երկհնչյունի դիմաց բնագրից մեկ օրինա՛կ դուրս գրիր:*

ա) **այ** .....

բ) **յա** .....

գ) **ույ** .....

դ) **յու** .....

32. *Ի՞նչ է նշանակում* **ծովակ** *բառը:*

.....

33. *Տրված բառերից ո՞րը հոմանիշ չէ* **ճառագայթ** *բառին:*

☐ ճաճանչ ☐ ցոլք ☐ շող ☐ փայլակ

34. *Բառերի ո՞ր զույգը բաղկացած չէ հականիշներից:*

☐ նոսրանալ – խտանալ ☐ հորիզոն – հեռանկար

☐ բարձրանալ – իջնել ☐ հեռավոր – մոտակա

35. *Պարբերության մեջ հոմանիշ գոյականների երկու զույգ կա. գտիր դրանք և գրիր:*

ա) .....

բ) .....

36. *Բառեր կազմիր՝ միացնելով տրված բաղադրիչները:*

ա) **արեգակ** + ային .....

բ) **լեռ** + ային .....

37. *Հնաբանական վերլուծություններից ո՞րն է սխալ:*

☐ **որքան** – հարաբերական դերանուն

☐ **այժմ** – ժամանակի մակբայ

☐ **հեռու** – չափի մակբայ

☐ **դեպի** – կապ, նախադրություն

38. *Բնագրում գտիր* **ա** *խոնարհման բայերը, գրիր դրանց անորոշի ձևերը:*

.....

39. *Գրիր* **փայլել** *բայի բազմապատկականը:*

.....

40. *Ինչ պաշտոն ունի կապույտ գրված երկրորդական նախադասությունը:*

.....

41. *Վերջին նախադասությունը կազմությամբ ինչպիսին է:*

☐ պարզ համառոտ ☐ բարդ համադասական

☐ պարզ ընդարձակ ☐ բարդ ստորադասական

Հարցարան 3

1. Մեծ եղբայրս Հակոբը պահում էր արաբական մի ձի որ ծնվել էր մեր տանը և երբեք չէր տեսել արմավենի և ոչ էլ նրա սմբակները մխրճվել էին հարավի տաք ավազներում բայց նրա աչքերի խորության մեջ կար հարավային բնանկարի ամբողջ սարսուռը և նրա վրնջյունի մեջ մենք զգում էինք անհուն անապատների կարոտը:

Ձին որին Հակոբը Մարան էր կոչում սև էր ինչպես սև սաթը փայլուն և ողորկ:

2. Մարանը սանձ չէր տեսել իր կյանքում, նա ազատորեն ման էր գալիս մեր տանը, մինչև անգամ ճաշի ժամանակ, երբ մեծ ընտանիքը բոլորում էր մեծ սեղանի շուրջը: Գալիս էր, դունչը դնում էր Հակոբի ուսին և սպասում, մինչև նա շաքար տար, հետո դնում էր հորս ուսին, ապա՝ մորս:

Մայրս անհուն բարությամբ և նոր հարսի ջինջ ժպիտով տալիս էր վերջին շաքարը ու հրամայում նրան գնալ պարտեզ:

3. Մարանը, շաքարը խոթխոթացնելով, գնում էր դեպի պարտեզ, որտեղից նա մի անգամ վրնջում էր իբրև տեղեկություն, որ արդեն պարտեզում է:

Այս վրնջյունի ժամանակ եղբայրս կանգ էր առնում, մինչև անգամ պատառը դեռ բերանին չհասցրած՝ ձեռքը մնում էր օդում, հրճվանքից կարմրում էր և շշնջում.

- Սիրեմ քըզի ...

4. Ամեն կիրակի օր Հակոբը Մարանին տանում էր հերկված դաշտը և բաց թողնում. Մարանը քամու նման թռչում էր, սահում էր նա հերկված դաշտի վրայից, ինչպես սուրացող ալիք:

Քաղաքի երիտասարդների համար մեծագույն հաճույք էր հավաքվել դաշտում՝ տեսնելու Մարանի վազքը: Մարանը հասնում էր դաշտի պռնկին, կանգ էր առնում, պայծառ աչքերով նայում հեռո՞ւն, հեռո՞ւն: Ինչ էր երազում այդ թռվիչ անասունը, ո՞վ իմանար: Ապա վերադառնում էր սուրացող ալիքի նման, գալիս, կանգնում էր Հակոբի մոտ: Հակոբի թևերը բացվում էին, փաթաթվում նրա վզին, շրթունքները մոտենում էին նրա քրտնած սև ստևներին և համբուրում:

Վ. Թոքվենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Բնագրում գործածված ո՞ր բառի բացատրությունն է սխալ:*

- ☐ **սարսուռ** – 1. բուռն հուզմունքից, վախից, ցրտից առաջացող դող, 2. սարսափ
- ☐ **սաթ** – դեղին կամ սև քարացած բուսական խեժ
- ☐ **սմբակ** – ձիու, էշի, ջորու և այլ կենդանիների ոտքի թաթը պատող եղջերային գոյացություն
- ☐ **պռունկ** – բնական հողաբլուր, հողային պատնեշ՝ ջրին ուղղություն տալու համար
- ☐ **ստև** – անասունների բարակ ու կարճ մազ

2. *Հակիրճ նկարագրիր Մարանին:*

3. *Բնութագրիր եղբորդ կամ քրոջդ:*

Մեծ եղբայրս Հակոբը պահում էր արաբական մի ձի որը ծնվել էր մեր տանը և երբեք չէր տեսել արմավենի և ոչ էլ նրա սմբակները մխրճվել էին հարավի տաք ավազներում բայց նրա աչքերի խորության մեջ կար հարավային բնանկարի ամբողջ սարսուռը և նրա վրնջյունի մեջ մենք զգում էինք անհուն անապատների կարոտը:

Ձին որին Հակոբը Մարան էր կոչում սև էր ինչպես սև սաթը փայլուն և ողորկ:

4. *Կետադրիր տրված հատվածի նախադասությունները:*

5. *Ճիշտ է, որ* **անհուն** *նշանակում է «անծայր, անեզր, անսահման»:*

☐ այո ☐ ոչ

6. **Վիշտը իր սև արմատն էր մխրճել նրա հոգում** *նախադասության մեջ* **մխրճել** *բայն ինչ իմաստով է գործածվել.*

☐ ուղիղ ☐ փոխաբերական

7. *Ո՞ր դեպքում համապատասխանություն չկա կենդանու և նրա ձայնի միջև:*

☐ **ձի** – վրնջյուն ☐ **առյուծ** – մռնչյուն
☐ **հորթ** – բառաչ ☐ **շուն** – կաղկանձ
☐ **արագիլ** – ղունղունոց ☐ **ոչխար** – մայուն

8. *Գրիր տրված բառերի հականիշները:*

ա) **մեծ** «ավագ» .....
բ) **հարավ** .....
գ) **տաք** .....
դ) **փայլուն** .....

9. *Չի բառի հոմանիշներից ո՞րն է նշանակում «բեռնակիր»:*

☐ նժույգ ☐ երիվար ☐ զամբիկ
☐ հովատակ ☐ գրաստ ☐ մտրուկ

10. *Առանձնացրո՛ւ տրված բառերի արմատները և վերջածանցները:*

☐ **արաբական** .....
☐ **արմավենի** .....
☐ **խորություն** .....
☐ **հարավային** .....
☐ **փայլուն** .....

11. *Ո՞ր բառի բառակազմական վերլուծությունն է սխալ:*

☐ **բնանկար** – հոդակապավոր բարդ բառ
☐ **սմբակ** – անհոդակապ բարդ բառ
☐ **վրնջյուն** – վերջածանցավոր բառ
☐ **անհուն** – նախածանցավոր բառ

12. *Դո՛ւրս գրիր կապույտ գրված բառերը և ձևաբանորեն վերլուծիր:*

ա) .....
բ) .....
գ) .....
դ) .....
ե) .....
զ) .....

13. **Եղբայրս** *ձևի* **ս**-*ն ինչ հոդ է:*

☐ ստացական ☐ դիմորոշ ☐ ցուցական

14. *Բնագրում ձիու գույնն ինչի՞ հետ է համեմատվում:*

.....

Երկրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Մարանը սանձ չէր տեսել իր կյանքում, նա ազատորեն ման էր գալիս մեր տանը, մինչև անգամ ճաշի ժամանակ, երբ մեծ ընտանիքը բոլորում էր մեծ սեղանի շուրջը, նա գալիս էր, դունչը դնում էր Հակոբի ուսին և սպասում, մինչև նրանից շաքար ստանար, հետո դնում էր հորս ուսին, ապա՝ մորս:

Մայրս անհուն բարությամբ և նոր հարսի ջինջ ժպիտով տալիս էր վերջին շաքարը ու հրամայում նրան գնալ պարտեզ:

15. *Առաջին նախադասության մեջ* **մեծ** *բառը նո՞ւյն նշանակությամբ է գործածվել:*

☐ այո ☐ ոչ

16. *Տրված բառերից ո՞րը հոմանիշ չէ* **ջինջ** *բառին:*

☐ պարզ ☐ կաթոգին
☐ հստակ ☐ վճիտ

17. *Տրված բառերից ո՞րն ածանցավոր չէ:*

☐ ազատորեն ☐ անհուն
☐ սեղան ☐ բարություն

18. *Կապույտ գրված բառերը գրիր համապատասխան հոլովների դիմաց (մի տողն ազատ է մնալու):*

Ուղղական .....

Սեռական .....

Տրական .....

Հայցական .....

Բացառական .....

Գործիական .....

Ներգոյական .....

19. *Անձնական դերանունների բացատրություններից ո՞րն է սխալ:*

☐ **իր** – 3-րդ դեմք, եզակի թիվ, սեռական հոլով

☐ **նա** – 3-րդ դեմք, եզակի թիվ, ուղղական հոլով

☐ **մեր** – 1-ին դեմք, հոգնակի թիվ, սեռական հոլով

☐ **նրան** – 3-րդ դեմք, եզակի թիվ, սեռական հոլով

20. *Խոնարհված բայերից որի՞ բացատրության մեջ սխալ կա:*

☐ **չէր տեսել** – դիմավոր բայ, սահմանական եղանակ, վաղակատար անցյալ, եզակի թիվ, 3-րդ դեմք, ներգործական սեռ, ժխտական խոնարհում, անկանոն

☐ **դնում էր** – դիմավոր բայ, սահմանական եղանակ, անկատար անցյալ, եզակի թիվ, 3-րդ դեմք, չեզոք սեռ, դրական խոնարհում, անկանոն

☐ **ստանար** – դիմավոր բայ, ըղձական եղանակ, անցյալ ժամանակ, եզակի թիվ, 3-րդ դեմք, ներգործական սեռ, դրական խոնարհում, կանոնավոր

☐ **տալիս էր** – դիմավոր բայ, սահմանական եղանակ, անկատար անցյալ, եզակի թիվ, 3-րդ դեմք, ներգործական սեռ, դրական խոնարհում, անկանոն

21. *Գրի՛ր հետևյալ բայերի հրամայական եղանակի եզակիի ձևերը:*

ա) **տեսնել** ..... գ) **դնել** .....

բ) **սպասել** ..... դ) **տալ** .....

22. *Նախադասության մեջ ո՞ր բառով կփոխարինես* **բոլորում էր**-*ը, որ իմաստը չխաթարվի:*

.....

23. *Ինչ պարագաներ են՝*

ա) **բարությամբ, ազատորեն** .....

բ) **կյանքում, ճաշի ժամանակ** .....

գ) **տանը, սեղանի շուրջը** .....

Երրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Մարանը, շաքարը խոթխոթացնելով, գնում էր դեպի պարտեզ, որտեղից նա մի անգամ վրնջում էր իբրև տեղեկություն, որ արդեն պարտեզում է:

Այս վրնջյունի ժամանակ եղբայրս կանգ էր առնում, մինչև անգամ պատառը դեռ բերանին չհասցրած՝ ձեռքը մնում էր օդում, հրճվանքից կարմրում էր և շշնջում.

- Սիրեմ քըզի...

24. *Ճիշտ է, որ* **շառագունել** *բայը հոմանիշ է* **կարմրել**-*ին:*

☐ այո ☐ ոչ

25. *Ճիշտ է* **պատառ** *բառի այս բացատրությունը՝ «ամբողջից (օրինակ՝ հացից) կտրած՝ պոկած մաս, կտոր»:*

☐ այո ☐ ոչ

26. *Կարո՞ղ ենք ասել, որ* **պատառաքաղ** *բառը բառակազմորեն կապ ունի այստեղ հանդիպող* **պատառ**-*ի հետ:*

☐ այո ☐ ոչ

27. *Տրվածներից ո՞րը հոմանիշ չէ* **հրճվանք** *բառին:*

☐ ցնծություն ☐ հաճույք
☐ բերկրանք ☐ խնդություն

28. **Կանգ առնել**-*ը կազմությամբ ինչպիսի բայ է:*

.....

29. **Չհասցրած** *բայանի չ-ն՝*

☐ ժխտական ածանց է:
☐ ժխտական քերականական մասնիկ է:

30. *Ո՞ր բայը չեզոք սեռի չէ:*

☐ գնալ ☐ կարմրել
☐ վրնջալ ☐ սիրել

31. *Գրիր* **շշնջում էր** *բայի անորոշ դերբայը:*

.....

32. *Տրված բառերի ձևաբանական վերլուծություններից ո՞րն է սխալ:*

☐ **դեպի** – կապ, նախադրություն
☐ **իբրև** – կապ, նախադրություն
☐ **որտեղից** – շաղկապ, բացառական հոլով
☐ **արդեն** – ժամանակի մակբայ

33. **Ժամանակը ոսկի է** *արտահայտության* **ժամանակ**-*ը և բնագրի մեջ գործածված* **ժամանակ**-*ը նո՞ւյն խոսքի մասին են պատկանում:*

☐ այո ☐ ոչ

34. *Սրանցից ո՞րն է ուղիղ խնդիր:*

☐ Մարանը ☐ եղբայրս
☐ շաքարը ☐ ձեռքը

35. *Քանի՞ բաղադրիչից է բաղկացած առաջին նախադասությունը:*

.....

36. *Կապույտ գրված դերբայական դարձվածն ինչ պաշտոն ունի:*

.....

37. *Այս հատվածում մակդիր կա՞:*

☐ այո ☐ ոչ

38. *Բարբառով ասված ուղղակի խոսքը գրիր գրական հայերենով:*

.....

Չորրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

1) Ամեն կիրակի օր Հակոբը Մարանին տանում էր հերկված դաշտը և բաց թողնում: 2) Մարանը քամու նման թռչում էր, սահում էր նա հերկված դաշտի վրայից, ինչպես սուրացող ալիք: 3) Քաղաքի երիտասարդների համար մեծագույն հաճույք էր հավաքվել դաշտը՝ տեսնելու Մարանի վազքը: 4) Մարանը հասնում էր դաշտի պռնկին, կանգ էր առնում, պայծառ աչքերով նայում հեռո՜ւն, հեռո՜ւն: 5) Ի՜նչ էր երազում այդ թռվիչ անասունը, ո՜վ իմանար: 6) Ապա վերադառնում էր սուրացող ալիքի նման, գալիս, կանգնում էր Հակոբի մոտ: 7) Հակոբի թևերը բացվում էին, փաթաթվում նրա վզին, շրթունքները մոտենում էին նրա քրտնած սև ստևներին և համբուրում:

39. *Ո՞ր գոյականից է առաջացել* **համբուրել** *բայը:*

.....

40. *Այս հատվածում* **սուրալ** *բայը ո՞ր իմաստով է գործածվել:*

☐ արագ վազել, սլանալ, արագ անցնել, թռչել
☐ փչել
☐ սահելով շարժվել, առաջ անցնել

41. *Տրվածներից ո՞րը հոմանիշ չէ* **թռվիչ** *բառին:*

☐ կախարդիչ ☐ դյութիչ
☐ հմայիչ ☐ առինքնող
☐ արբեցուցիչ ☐ հրապուրիչ

42. *ա)* **Մեծագույն** *բառը ո՞ր խոսքի մասին է պատկանում, ինչ ձև է:*

.....

բ) Գրիր **մեծագույն**-*ին հոմանիշ քերականական մյուս երկու ձևերը:*

.....

43. *Մտքում կազմիր կապույտ գրված բայերի հրամայական եղանակի եզակիի ձևերը: Դրանք ինչ ընդհանուր կողմ ունեն:*

.....

.....

44. *1-ին, 2-րդ, 5-րդ և 7-րդ նախադասություններից դո՛ւրս գրիր մեկական դերանուն և վերլուծիր:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

45. *Գրիր, թե նախադասության ինչ անդամ են:*

ա) **սուրացող** .....

բ) **քաղաքի** .....

գ) **հեռուն** .....

դ) **վզին** .....

46. *3-րդ նախադասության դերբայական դարձվածն ինչ պաշտոն ունի:*

.....

47. *3-րդ նախադասությունը կազմությամբ ինչպիսին է:*

.....

48. *Ինչ հնչերանգ ունեն 4-րդ և 5-րդ նախադասությունները:*

.....

49. *Գտիր համեմատությունները: Ինչն ինչի հետ է համեմատվում:*

ա) .....

բ) .....

Հարցարան 4

1. - Օրիո՛րդ, ես Ձեր առջև մեղավոր եմ, խնդրում եմ, մոռացե՛ք իմ հանդգնությունը: Օրիո՛րդ, ես սխալված եմ եղել, ներում եմ խնդրում, ես Ձեզ չէի ճանաչում: Գիտեմ, դեռ Ձեր սրտում ոխ եք պահում իմ դեմ: Դուք առաջ ինձ նայում էիք զզվանքով, այժմ՝ ցավակցությամբ: Այդ ինձ վիրավորում է և ստորացնում իմ աչքում: Ատեցե՛ք ինձ, թշնամացե՛ք, բայց մի՛ արհամարհեք: Արհամարհանքն ինքնասերի մեծագույն պատիժն է:

2. - Չեմ հասկանում, ինչո՞ւ եք այդ ասում: Ես Ձեզ չեմ կարող ո՛չ ատել, ո՛չ արհամարհել: Մի՞թե ինձ նման մի աննշան էակ կարող է Ձեզ ստորացնել...

- Մի՛ կեղծեք, ի սեր Աստծո, կեղծությունը Ձեզ չի սազում: Դուք շատ լավ եք հասկանում, թե ես ինչ եմ ուզում ասել:

3. Շուշանիկը լրջորեն նայեց նրա գունատ երեսին և զգաց, որ նրա հոգին սաստիկ խռովված է: Ճակատի վերքից մնացել էր բավական մեծ սպի, որ նրա նուրբ կերպարանքին այժմ տալիս էր առնականություն: Շուշանիկը շփոթվեց նրա աչքերի փայլից և գլուխը կրծքին թեքելով՝ հանդարտ շարունակեց ճանապարհը:

4. Միայն մի րոպե օրիորդ գոչեց Միքայելը Դուք շատ եք շտապում իսկ ես կկամենայի մի քանի խոսք ասել միայն մի քանի խոսք: Չգիտեմ՝ ինչպես ասեմ, բայց պիտի ասեմ... Թո՛ւյլ տվեք անկեղծ լինել, այս հարկավոր է թե՛ ինձ և թե՛ Ձեզ համար...

Հրամայեցեք ասաց Շուշանիկը կանգ առնելով և ձեռքերն անփույթ դնելով կրծքին գլուխը թեթևակի աջ ուսին թեքելով ես պատրաստ եմ լսելու Ձեզ:

Արդեն նա վճռել էր այս անգամ բացարձակ և աներկյուղ հայտնել, որ իր և այդ մարդու մեջ չկա և չի կարող լինել ոչ մի առնչություն:

Շիրվանզադե, «Քառս»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Բարեկիրթ խոսքի ինչ միջոցներ են կիրառվել բնագրում:*

ա) _____

_____

բ) _____

_____

2. *Ո՞ւմ են դիմում* **օրիորդ** *բառով:*

_____

3. *Այժմյան երիտասարդներին այսպիսի խոսակցությունը բնորո՞շ է:*

☐ այո ☐ ոչ

4. *ա) Մի երկխոսությո՛ւն գրիր, որ մեր օրերում կարող է տեղի ունենալ երկու պատանիների (կամ երիտասարդների) միջև:*

բ) Վերնագրիր:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առաջին հատվածին վերաբերող առաջադրանքներ

1) - Օրիո՛րդ, ես Ձեր առջև մեղավոր եմ, խնդրում եմ, մոռացե՛ք իմ հանդգնությունը: 2) Օրիո՛րդ, ես սխալված եմ եղել, ներում եմ խնդրում, ես Ձեզ չէի ճանաչում: 3) Գիտեմ, դեռ Ձեր սրտում ոխ եք պահում իմ դեմ: 4) Դուք առաջ ինձ նայում էիք զզվանքով, այժմ՝ ցավակցությամբ: 5) Այդ ինձ վիրավորում է և ստորացնում իմ աչքում: 6) Ատեցե՛ք ինձ, թշնամացե՛ք, բայց մի՛ արհամարհեք: 7) Արհամարհանքն ինքնասերի մեծագույն պատիժն է:

5. *Բայերի ո՞ր զույգը բաղկացած չէ հոմանիշներից:*

☐ խնդրել – թախանձել
☐ արհամարհել – պախարակել
☐ ստորանալ – նվաստանալ
☐ ատել – հակակրել

6. *Գոյականների ո՞ր զույգերը բաղկացած չէ հոմանիշներից:*

☐ ոխ – նենգություն ☐ հանդգնություն – համարձակություն
☐ զզվանք – նողկանք ☐ ցավակցություն – կարեկցանք

7. *Կապույտ գրված գոյականներից յուրաքանչյուրի դիմաց գրիր իր վերջածանցը:*

ա) .....
բ) .....
գ) .....

8. *Հատվածում գտիր առաջին դեմքի անձնական դերանունները և գրիր համապատասխան հոլովի դիմաց:*

☐ Ուղղական .....
☐ Սեռական .....
☐ Տրական .....
☐ Հայցական .....

9. *Հատվածում գտիր երկրորդ դեմքի անձնական դերանունները և գրիր համապատասխան հոլովի դիմաց (մեկն ազատ պիտի մնա):*

☐ Ուղղական ..... ☐ Տրական .....
☐ Սեռական ..... ☐ Հայցական .....

10. *Դո՛ւրս գրիր կապույտ գրված բայերը՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով իր բայածանցը:*

ա) .....
բ) .....
գ) .....

11. *Հատվածից դո՛ւրս գրիր հրամայական եղանակի բայաձևերը:*

ա) .....
բ) .....
գ) .....
դ) .....

12. *Թվարկվածներից ո՞րը ժամանակի մակբայ չէ:*

☐ առջև ☐ դեռ ☐ առաջ ☐ այժմ

13. *Ո՞ր ստորոգյալը կազմությամբ պարզ չէ:*

☐ մեղավոր եմ ☐ խնդրում եմ
☐ չէի ճանաչում ☐ մի՛ արհամարհեք

14. *Նախադասության կառուցվածքում* **օրիորդ** *բառը լեզվական ինչ միավոր է:*

.....

15. *Ո՞ր նախադասություններն են կապակցվել համադասական շաղկապներով:*

☐ 1-ին ☐ 2-րդ ☐ 5-րդ ☐ 6-րդ

16. *Ո՞ր նախադասության մեջ ստորոգյալի լրիվ զեղչում կա:*

☐ 1-ին ☐ 2-րդ ☐ 4-րդ ☐ 7-րդ

Երկրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

1) - Չեմ հասկանում, ինչո՞ւ եք այդ ասում: 2) Ես Ձեզ չեմ կարող ո՛չ ատել, ո՛չ արհամարհել: 3) Մի՞թե ինձ նման մի աննշան էակ կարող է Ձեզ ստորացնել...

4) - Մի՛ կեղծեք, ի սեր Աստծո, կեղծությունը Ձեզ չի սազում: 5) Դուք շատ լավ եք հասկանում, թե ես ի՛նչ եմ ուզում ասել:

17. *Դո՛ւրս գրիր կապույտ գրված բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով, թե ո՛ր խոսքի մասին են պատկանում:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

18. *Ո՞րն է ճիշտ՝* **Աստծո՞ն**, *թե* **Աստծու**:

☐ **Աստծո** ☐ **Աստծու** ☐ երկուսն էլ

19. *Խոնարհված յուրաքանչյուր բայի դիմաց գրիր համապատասխան դեմքը:*

ա) **չեմ հասկանում** .....

բ) **մի՛ կեղծեք** .....

գ) **չի սազում** .....

դ) **հասկանում եք** .....

20. *Ճիշտ է, որ* **ո՛չ...**, **ո՛չ...**-*ը կրկնադիր շաղկապ է:*

☐ այո ☐ ոչ

21. *Կազմությամբ ինչպիսին է 2-րդ նախադասությունը:*

☐ պարզ ընդարձակ նախադասություն

☐ բարդ համադասական նախադասություն

22. *Ո՞ր երրորդ նախադասությունն է բարդ ստորադասական:*

.....

Երրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

1) Շուշանիկը լրջորեն նայեց նրա գունատ երեսին և զգաց, որ նրա հոգին սաստիկ խռովված է: 2) Ճակատի վերքից մնացել էր բավական մեծ սպի, որ նրա նուրբ կերպարանքին այժմ տալիս էր առնականություն: 3) Շուշանիկը շփոթվեց նրա աչքերի փայլից և գլուխը կրծքին թեքելով՝ հանդարտ շարունակեց ճանապարհը:

23. **Առնական** *և* **առնել** *բառերը նո՞ւյն արմատն ունեն:*

☐ այո ☐ ոչ

24. *Առաջին նախադասությունից դո՛ւրս գրիր մակբայները:*

ա) ..... բ) .....

25. *Դո՛ւրս գրիր կապույտ գրված բայերը՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով եղանակը և ժամանակաձևը:*

ա) .....

բ) .....

գ) .....

26. *Ո՞րերորդ նախադասության մեջ և համադասական շաղկապով, և ստորադասական շաղկապով կապակցում կա:*

.....

27. *Երկրորդ նախադասության մեջ* **որ**-*ն ինչ է:*

☐ հարաբերական դերանուն

☐ ստորադասական շաղկապ

28. *Երրորդ նախադասությունը կազմությամբ ինչպիսին է:*

☐ պարզ ընդարձակ նախադասություն

☐ բարդ համադասական նախադասություն

☐ բարդ ստորադասական նախադասություն

Չորրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Միայն մի րոպե օրիորդ գոչեց Միքայելը Դուք շատ եք շտապում իսկ ես կկամենայի մի քանի խոսք ասել միայն մի քանի խոսք: Չգիտեմ՝ ինչպես ասեմ, բայց պիտի ասեմ... Թո՛ւյլ տվեք անկեղծ լինել, այս հարկավոր է թե՛ ինձ և թե՛ Ձեզ համար...

Հրամայեցեք ասաց Շուշանիկը կանգ առնելով և ձեռքերն անփույթ դնելով կրծքին գլուխը թեթևակի աջ ուսին թեքելով ես պատրաստ եմ լսելու Ձեզ:

Արդեն նա վճռել էր այս անգամ բացարձակ և աներկյուղ հայտնել, որ իր և այդ մարդու մեջ չկա և չի կարող լինել ոչ մի առնչություն:

29. *Կետադրիր հատվածի կապույտ գրված նախադասությունները:*

30. *Ինչպես պիտի արտասանել* **աներկյուղ** *բառի* **ե**-*ն:*

☐ ե ☐ է

31. *Այս բոլոր իմաստները բնորո՞շ են* **անփույթ** *բառին:*

1. Անհոգ, անտարբեր, անուշադիր:
2. Անուշադրությամբ կատարված:
3. Թափթփված:

☐ այո ☐ ոչ

32. *Հետևյալ բառերից ո՞րն է կազմությամբ տարբերվում մյուսներից:*

☐ անկեղծ ☐ առնչություն
☐ անփույթ ☐ աներկյուղ

33. *Ո՞ր գոյականը չի ենթարկվում* **ի** *հոլովման:*

☐ րոպե ☐ օրիորդ
☐ գլուխ ☐ առնչություն

34. *Հատվածում համապատասխան դերանո՛ւն (1-ական) գտիր և գրիր իր տեղում:*

ա) անձնական .....
բ) ցուցական .....
գ) անորոշ .....
դ) հարցական.....
ե) ժխտական.....

35. *Հատվածում համապատասխան դիմավոր բա՛յ (1-ական) գտիր և գրիր իր տեղում:*

ա) սահմանական եղանակի բայածև .....
բ) հրամայական եղանակի բայածև .....
գ) ըղձական եղանակի բայածև .....
դ) ենթադրական եղանակի բայածև.....
ե) հարկադրական եղանակի բայածև.....

36. *Հատվածից դո՛ւրս գրիր ներհակական շաղկապները:*

ա) ..... բ) .....

37. **Թե՛..., թե՛** *շաղկապի մեկ հոմանիշ գրիր:*

.....

38. **Ո՞ր** *շաղկապն ինչպիսին է:*

☐ մենիմաստ ☐ բազմիմաստ

39. *Շուշանիկի ուղղակի խոսքը դարձրո՛ւ առաջադաս:*

.....
.....
.....
.....
.....

Հարցարան 5

1. Ուրախ կլանչոցով շունը նետվեց դեպի կածան: Մի պահ ես էլ ուրախացա ու վազեցի: Խաշամը խշխշում էր խլացնելու չափ ուժգին ու չոր: Այդ խշխշոցն էր, երբ վազում էի. իմ ականջներում միայն այդ խշխշոցն էր: Խաշամը հասնում էր ծնկներիս: Երբ կանգ էի առնում, լուռ լռություն էր. այդ լռության ու լույսի մեջ հազիվ լսելի սվսվալով օրորվում էին թափվող տերևները: Սև մոշահավը կչկչոցով թռավ իմ ոտքերի տակից, և դարձյալ խոր լռություն էր: Ինձ թվում էր, թե ես լսում եմ անտառի խաղաղ շնչառությունը:

2. Ես հետ նայեցի: Իմ հորեղբայրը ծնկել էր աղբյուրի մոտ և ինչոր բան էր անում: Մի քիչ էլ խորանալով անտառի մեջ՝ ես դարձյալ հետ նայեցի: Ինձ թվաց, թե հորեղբայրն արդեն գնացել է, բայց չէր գնացել, դեռ կռացած էր աղբյուրի վրա և դժվար էր նկատվում, քանի որ հողագույն էին և՛ ճանապարհը, և՛ նրա հագուստը: Ես նստեցի ծառի հետևը և, որպեսզի ինքս ինձ խաբեմ, թե որևէ բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին գիրքը:

3. Գիրքը, սակայն, ես չէի կարդում, գրքի վրա կռացած՝ ես սպասում էի, թե իմ հորեղբայրը երբ է հեռանալու վերադարձի ճանապարհից: Նա հիմա նստել էր աղբյուրի մոտ, ծխում էր և, ինչպես ինձ էր թվում, նայում էր անտառի մեջ ինձ: «Օրինակ՝ ինչո՞ւ ես էդպես պարապ նստել,- մտածեցի ես,- խոզ գտնելը ձեր գործն է, գիրք կարդալը՝ իմ. ես ահա կարդում եմ իմ գիրքը, իսկ դուք պարապ նստել եք»: Եվ որպեսզի ինքս ինձ ավելի խաբեմ, ես ականջներս փակեցի մատներով ու նայեցի միայն գրքին: Իբր թե կարդում եմ, իբր թե միայն կարդում եմ:

4. Հեռավոր թույլ խշխշոց էր լսվում: Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի, խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ: Բայց ես չհասցրի վախենալ, որովհետև նույն պահին էլ տեսա մեր շանը: Նա թափով կպավ ինձ, ցատկեց, նորից ցատկեց, վնգստաց ու կանչեց դեպի Պարզ բացատ: Որպեսզի նա նորից չկլանչի ու խշխշացնի, ես իմ հացի կեսը տվեցի նրան:

Հ. Մաթևոսյան, «Հացը»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Ո՞ր եղանակի բայաձևերի միջոցով է պատմվում դեպքը:*

☐ սահմանական
☐ հրամայական
☐ ըղձական
☐ ենթադրական
☐ հարկադրական

2. *Հետաքրքրական մի բան պատմիր որևէ կենդանու մասին:*

3. *Հակիրճ գրիր կարծիքդ քո կարդացած գրքերից մեկի մասին:*

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Ո՞ր եղանակի բայաձևերի միջոցով է պատմվում դեպքը:*

☐ սահմանական
☐ հրամայական
☐ ըղձական
☐ ենթադրական
☐ հարկադրական

2. *Հետաքրքրական մի բան պատմիր որևէ կենդանու մասին:*

3. *Հակիրճ գրիր կարծիքդ քո կարդացած գրքերից մեկի մասին:*

8. *Ձևաբանորեն վերլուծիր կապույտ գրված գոյականները:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

9. *Ձևաբանորեն վերլուծիր կապույտ գրված բայերը:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

10. *Վերլուծիր հետևյալ դերբայները:*

ա) **սվսվալով** .....

բ) **թափվող** .....

11. *Յուրաքանչյուրի դիմաց հատվածից մեկական օրինակ դուրս գրիր:*

ա) համադասական շաղկապ .....

բ) ստորադասական շաղկապ .....

12. *Հատվածից դո՛ւրս գրիր որոշիչ-որոշյալի երկու կապակցություն:*

ա) .....

բ) .....

13. **Սև մոշահավը կչկչոցով թռավ իմ ոտքերի տակից, և դարձյալ խոր լռություն էր** *նախադասության մեջ* **և**-*ից առաջ ինչո՞ւ է ստորակետ դրվել:*

.....

.....

14. *Հոգնակիի ձևերից ո՞րն է սխալ:*

☐ գառներ ☐ եզներ ☐ բեռներ

☐ ծառներ ☐ հարսներ ☐ նռներ

Երկրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Ես հետ նայեցի: Իմ հորեղբայրը ծնկել էր աղբյուրի մոտ և ինչ-որ բան էր անում: Մի քիչ էլ խորանալով անտառի մեջ՝ ես դարձյալ հետ նայեցի: Ինձ թվաց, թե հորեղբայրն արդեն գնացել է, բայց չէր գնացել, դեռ կռացած էր աղբյուրի վրա և դժվար էր նկատվում, քանի որ հողագույն էին և՛ ճանապարհը, և՛ նրա հագուստը: Ես նստեցի ծառի հետևը և, որպեսզի ինքս ինձ խաբեմ, թե որևէ բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին գիրքը:

15. *Լրացո՛ւ համապատասխան տառերը՝* **բ** *կամ* **փ**: *Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում* **բ** *գրվում:*

☐ աղ...յուր, նր...ություն, համ...ուրել, ճամ...որդություն
☐ խա....եություն, սր...ագրիչ, դար...նոց, համ...երություն
☐ ճող...յուն, ի...րև, Սերո...յան, եր....ներանգ
☐ եղ...այր, ա...խազ, եր...եք, եր...նավառ

16. *Եթե տողադարձ արվի այսպես՝* **հոր-եղբայր**, *ճիշտ կլինի:*

☐ այո ☐ ոչ

17. **Սխրագործություն** *բառի տողադարձի տրված դեպքերից ո՞րն է սխալ:*

☐ **սխրա-գործություն** ☐ **սխրագործու-թյուն**
☐ **սխրագործութ-յուն** ☐ **սխրագործ-ություն**

18. **Ծնկել** *և* **չոքել** *բայերի առաջին բաղադրիչներով բա՛ռ կազմիր:*

.....

19. **Ծնկել** *և* **չոքել** *հոմանիշները լրացրո՛ւ համապատասխան տողում:*

ա) գրական-գրքային .....

բ) ժողովրդական-խոսակցական .....

20. *Բառերի ո՞ր զույգը բաղկացած չէ հոմանիշներից:*

☐ ճանապարհ – ուղի ☐ նկատել – նշմարել
☐ նստել – բազմել ☐ խորանալ – խոտորվել
☐ նայել – դիտել ☐ դարձյալ – կրկին

21. *Տրված բառերից ո՞րը գույն չի նշանակում:*

☐ մանուշակագույն ☐ նրբագույն
☐ երկնագույն ☐ մոխրագույն

22. *Այս հատվածից դուրս գրիր հոմանիշ անորոշ դերանունները (դրանք նույն բառի հետ են կապակցվել):*

.....

23. *Ո՞ր խոսքի մասին են պատկանում կապույտ գրված բառերը:*

.....

24. *Տրված շաղկապներից որո՞նք են ստորադասական:*

☐ և ☐ բայց
☐ թե ☐ քանի որ
☐ և..., և ☐ որպեսզի

25. **Քանի որ** *շաղկապով կապակցված երկրորդական նախադասությունն ինչ իմաստ է արտահայտում:*

☐ պայման ☐ նպատակ
☐ պատճառ ☐ ժամանակ

26. **Որպեսզի** *շաղկապով կապակցված երկրորդական նախադասությունն ինչ իմաստ է արտահայտում:*

☐ պայման ☐ նպատակ
☐ պատճառ ☐ հիմունք

Երրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

1) Գիրքը, սակայն, ես չէի կարդում, գրքի վրա կռացած՝ ես սպասում էի, թե իմ հորեղբայրը երբ է հեռանալու վերադարձի ճանապարհից: 2) Նա հիմա նստել էր աղբյուրի մոտ, ծխում էր և, ինչպես ինձ էր թվում, նայում էր անտառի մեջ ինձ: 3) «Օրինակ՝ ինչո՞ւ ես էդպես պարապ նստել,- մտածեցի ես,- խոզ գտնելը ձեր գործն է, գիրք կարդալը՝ իմ. ես ահա կարդում եմ իմ գիրքը, իսկ դուք պարապ նստել եք»: 4) Եվ որպեսզի ինքս ինձ ավելի խաբեմ, ես ականջներս փակեցի մատներով ու նայեցի միայն գրքին: 5) Իբր թե կարդում եմ, իբր թե միայն կարդում եմ:

27. *Կապույտ գրված գոյականները լրացրո՛ւ համապատասխան հոլովների դիմաց (մեկ հոլովի տողը դատարկ է մնալու):*

Ուղղական .....

Սեռական .....

Տրական .....

Հայցական .....

Բացառական .....

Գործիական .....

Ներգոյական .....

28. *Գրիր անձնական դերանունների ուղիղ և թեքված (հոլովված) եզակի և հոգնակի այն ձևերը, որոնք հանդիպում են այս հատվածում:*

ա) 1-ին դեմք .....

բ) 2-րդ դեմք .....

գ) 3-րդ դեմք .....

29. *Ո՞րերորդ նախադասության մեջ ստորոգյալի զեղչում կա:*

.....

30. *Ո՞ր նախադասություններում ենթակայի զեղչում կա:*

☐ 1-ին ☐ 4-րդ ☐ 3-րդ ☐ 5-րդ

31. *Առաջին նախադասության մեջ բաղադրիչ նախադասությունների ինչպիսի կապակցում կա:*

ա) .....

բ) .....

32. *Առաջին նախադասության մեջ գործածված* **սակայն**-*ը ինչ է:*

☐ ներհակական համադասական շաղկապ

☐ միջանկյալ բառ

33. *Երրորդ նախադասության մեջ ինչո՞ւ են չակերտներ գործածվել:*

.....

34. *Երրորդ նախադասության մեջ գործածված համադասական շաղկապն ինչ իմաստ է հաղորդում նախադասությանը:*

☐ միավորիչ ☐ ներհակական

☐ տրոհական ☐ մեկնական

35. *Չորրորդ նախադասությունը քանի բաղադրիչից է կազմված:*

.....

36. *Ճիշտ է, երբ* **կարդալ** *բայի* **ր**-*ն* **ռ** *են արտասանում:*

☐ այո ☐ *ոչ*

37. **Էդպես** *բառը ո՞ր բառապաշարին է պատկանում:*

☐ գրական-գրքային ☐ *խոսակցական*

Չորրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Հեռավոր թույլ խշխշոց էր լսվում: Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի, խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ: Բայց ես չհասցրի վախենալ, որովհետև նույն պահին էլ տեսա մեր շանը: Նա թափով կպավ ինձ, ցատկեց, նորից ցատկեց, վնգստաց ու կանչեց դեպի Պարզ բացատ: Որպեսզի նա նորից չկլանչի ու խշխշացնի, ես իմ հացի կեսը տվեցի նրան:

38. *Ո՞ր դեպքում է բաց թողնված տեղում* **ց** *գրվում:*

- ☐ նայվա...ք
- ☐ նստվա...ք
- ☐ լվա...ք
- ☐ խզվա...ք

39. *Ո՞ր շարքի բոլոր հատուկ անուններում է միայն առաջին բաղադրիչը մեծատառ գրվում.*

- ☐ Տրդատ (Ե/ե)րրորդ, (Խ/խ)աղաղ (Օ/օ)վկիանոս, Սյունյաց (Ա/ա)շխարհ
- ☐ Հայաստանի (Հ/հ)անրապետություն, (Հ/հ)ին (Ա/ա)շխարհ, Արշակ (Բ/բ)
- ☐ Հայկական (Լ/լ)եռնաշխարհ, Տիգրան (Մ/մ)եծ, Գևորգյան (Ճ/ճ)եմարան
- ☐ Լոռու (Մ/մ)արզ, Հայկական (Բ/բ)արձրավանդակ, Պարզ (Լ/լ)ին

40. *Տրված բառերից ո՞րը* **-եղ** *վերջածանց ունի:*

- ☐ անմեղ
- ☐ համեղ
- ☐ հրաշագեղ
- ☐ վարատեղ

41. **Խշխշոց** *և* **խշխշացնել** *բառերի հիմքում ինչ բառ է ընկել:*

- ☐ գոյական
- ☐ ձայնարկություն
- ☐ մակբայ
- ☐ վերաբերական

42. *Հատվածում գտիր և դո՛ւրս գրիր հոմանիշ բայերի մեկ զույգ:*

.....

43. *Յուրաքանչյուր բայածանցի դիմաց մեկական բա՛յ դուրս գրիր հատվածից:*

ա) **են** .....

բ) **ն** .....

գ) **չ** .....

դ) **ացն** .....

ե) **ցն** .....

44. *Լրացրո՛ւ՝ ընտրելով կապույտ գրվածներից:*

ա) տեղի պարագա .....

բ) ժամանակի պարագա .....

գ) ձևի պարագա .....

դ) չափ ու քանակի պարագա .....

45. *Որտեղ ուղիղ խնդիր չկա:*

☐ Ես հայացքս գրքից բարձրացրի:

☐ Նույն պահին էլ տեսա մեր շանը:

☐ Նա թափով կպավ ինձ:

☐ Ես իմ հացի կեսը տվեցի նրան:

46. *Նախադասությանը ինչ իմաստ է հաղորդում* **որովհետև** *շաղկապը:*

☐ պայման ☐ նպատակ

☐ պատճառ ☐ հիմունք

47. *Ո՞ր ձևն է ճիշտ:*

☐ վերցրի ☐ վերցրեցի

48. *Ո՞ր ձևն է ճիշտ:*

☐ կպնել ☐ կպչել

Հարցարան 6

1. Հին ժամանակ մի ագահ որսորդ է լինում:

Էդ որսորդը շատ քարայծեր ու վայրի ոչխարներ է սպանում, բայց աչքը չի կշտանում: Մի օր էլ կնոջն ասում է.

- Ես դրանց կենդանի պիտի բռնեմ:

Ասում է, հրացանն առնում, սար է բարձրանում, մի շատ խոշոր արու այծ է սպանում: Տիկ է հանում էդ այծին, մտնում մորթու մեջ, ահագին եղջյուրներն էլ ամրացնում իր գլխին ու այդպես գնում լեռան ծերպերը, ուր քարայծերն էին թաքնվում:

2. Ժայռերի տակով նա զգուշությամբ մոտենում է այծերի հոտին, էն մտքով, որ նրանց խաբի ու կենդանի-կենդանի բռնի:

Էստեղ դարան մտած մի որսորդ որսի է սպասելիս լինում: Էդ որսորդը տեսնում է, որ մի ահագին քարայծ կամաց-կամաց գնում է դեպի մառախուղի մեջ հազիվ երևացող հոտը: Հրացանը մեկնում է, որ կրակի, մեկ էլ մտածում է. «Շատ է մեծ, երևի մի գնդակով չընկնի»:

3. Իր հին հրացանի փողից մի մեծ, կլոր գնդակ էլ է ներս գցում, շամփուրով ամրացնում և զույգ գնդակներն էլ արձակում քարայծի վրա: Կրակելուն պես մի մարդկային ճիչ է լսում: Վազում տեսնում է, որ իր սպանածը մարդ է՝ այծի մորթու մեջ...

- Ա՛յ մարդ, ինձ ինչի՞ արյան տակ գցեցիր,- գոչում է որսորդը սարսափած:

4. Այդտեղ այծի մորթով մարդը պատմում է իր խորամանկության մասին և հոգին փչում է:

Որսորդը նրան թաղում է, գերեզմանին մի տափակ քար է գցում ու վրան փորագրում հետևյալ խրատական խոսքը. «Ով իր մորթին փոխի, զույգ գնդակի կպատահի»:

Վ. Անանյան, «Ավանդություն»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Ո՞ր հատվածներում մեջբերվող խոսք կա:*

- ☐ 1-ին և 2-րդ
- ☐ 3-րդ և 4-րդ
- ☐ 1-ին, 2-րդ և 3-րդ
- ☐ բոլոր հատվածներում

2. *Հայկական երկու-երեք առա՛ծ գրիր մարդկային լավ և վատ հատկանիշների մասին:*

3. *Լավ գործի և բարի անվան մասին համառոտ շարադրա՛նք գրիր:*

Առաջին հատվածին վերաբերող առաջադրանքներ

Հին ժամանակ մի ագահ որսորդ է լինում:

Էդ որսորդը շատ քարայծեր ու վայրի ոչխարներ է սպանում, բայց աչքը չի կշտանում: Մի օր էլ կնոջն ասում է.

- Ես դրանց կենդանի պիտի բռնեմ:

Ասում է, հրացանն առնում, սար է բարձրանում, մի շատ խոշոր արու այծ է սպանում: Տիկ է հանում էդ այծին, մտնում մորթու մեջ, ահագին եղջյուրներն էլ ամրացնում իր գլխին ու այդպես գնում լեռան ծերպերը, ուր քարայծերն էին թաքնվում:

4. **Ծերպ** *բառն իր ո՞ր իմաստով է գործածվել այս հատվածում:*

- ☐ ճեղք, մի բանի մեջ բացված արանք
- ☐ փոքրիկ անցք, ծակ
- ☐ խորշ, խոռոչ (լեռան, ժայռի մեջ)
- ☐ (փոխաբերական) հոգու՝ սրտի անկյուն

5. *Ո՞ր դեպքում բառի և բառիմաստի անհամապատասխանություն կա:*

- ☐ արու այծ – նոխազ
- ☐ արու ոչխար – խոյ
- ☐ էգ ոչխար – մաքի
- ☐ էգ ձի – մտրուկ

6. *Ո՞ր դեպքում* **որդ**-*ը ածանց չէ:*

- ☐ գնորդ
- ☐ լողորդ
- ☐ անձրևորդ
- ☐ դիմորդ

7. **Ես դրանց կենդանի պիտի բռնեմ** *նախադասության մեջ* **կենդանի** *բառն ինչ նշանակությամբ է գործածվել:*

.....

8. *Ճիշտ է, որ* **աչքը կշտանալ** *դարձվածքը նշանակում է «հագենալ, լիանալ»:*

☐ այո ☐ ոչ

9. **Տիկ հանել** *դարձվածքը ո՞ր իմաստով է գործածվել այս հատվածում:*

☐ կենդանու մաշկը հանել
☐ մարդու մաշկը տիկի նման հանել իբրև պատժամիջոց

10. *Հոգնակիի կազմության ո՞ր ձևն է սխալ:*

☐ օրացույցներ ☐ նստացույցներ
☐ կողմնացույցներ ☐ ժամացույցներ

11. *Չնաբանորեն վերլուծիր կապույտ գրված բայերը:*

ա) .....
բ) .....

12. *Չնաբանորեն վերլուծիր կապույտ գրված գոյականները:*

ա) .....
բ) .....
գ) .....
դ) .....

13. *Կազմիր տրված որակական ածականի համեմատության աստիճանների բոլոր հնարավոր ձևերը:*

ա) **հին** .....
բ) **ագահ** .....

14. **Այս - էն, այդ - էն, այն - էն** *բառազույգերի առաջին միավորներն ինչ ձևեր են:*

☐ գրական ☐ խոսակցական

Երկրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Ժայռերի տակով նա զգուշությամբ մոտենում է այծերի հոտին, էն մտքով, որ նրանց խաբի ու կենդանի-կենդանի բռնի:

Էստեղ դարան մտած մի որսորդ որսի է սպասելիս լինում: Էդ որսորդը տեսնում է, որ մի ահագին քարայծ կամաց-կամաց գնում է դեպի մառախուղի մեջ հազիվ երևացող հոտը: Հրացանը մեկնում է, որ կրակի, մեկ էլ մտածում է. «Շատ է մեծ, երևի մի գնդակով չընկնի»:

15. *Գրիր՝ փակագծերը հանելով: Ո՞ր շարքի բոլոր բառերում է բառերի բաղադրիչների միջև գծիկ դրվում:*

☐ (տեր) տիրական, երգ (երաժշտություն), Նոր (Նորք)

.....

☐ (անտես) անհայտ, կաթիլ (կաթիլ), վառ (կարմիր)

.....

☐ ընկած (ելած), (գրական) երաժշտական, (ճեփ) ճերմակ

.....

☐ թև (թիկունք), սրբություն (սրբոց), առոք (փառոք)

.....

16. **Մեկնել** *բայն այս հատվածում ո՞ր իմաստով է գործածվել:*

☐ մի տեղից դուրս գալ, դիմել դեպի մի տեղ
☐ հեռանալ, գնալ
☐ պարզել, երկարել

17. **Գնդակ** *բառն ըստ իմաստի ինչպիսին է:*

☐ մենիմաստ ☐ բազմիմաստ

18. *Այծերի խմբից բացի ուրիշ ո՞ր կենդանիների խումբն են* **հոտ** *անվանում:*

☐ կովերի ☐ ոչխարների
☐ ձիերի ☐ գայլերի

19. *Ո՞ր բառը հոմանիշ չէ* **մառախուղ**-*ին:*

☐ մեգ ☐ բիլ ☐ մշուշ ☐ շամանդաղ

20. *Մեկ բառով ինչպես կասես* **դարան մտած**:

.....

21. *Հատվածում մեկ անհոդակապ բարդ բառ կա. գտիր այն և գրիր:*

.....

22. **Զգուշությամբ** *հոլովածևի* **բ**-*ն ինչ է:*

☐ գործիական հոլովի վերջավորությունը

☐ վերջածանց

23. *Ո՞ր դերբայներն են:*

ա) **մոտենում** .....

բ) **դարան մտած** .....

գ) **սպասելիս** .....

դ) **երևացող** .....

24. *Սրանք նո՞ւյն եղանակի բայաձևեր են՝* **խաբի, բռնի, կրակի, չընկնի**:

☐ այո ☐ ոչ

25. *Կապույտ գրվածները նախադասության ինչ անդամներ են:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

26. **Հրացանը մեկնում է, որ կրակի** *նախադասության մեջ* **որ** *շաղկապն ինչ իմաստով է գործածվել:*

.....

Երրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Իր հին հրացանի փողից մի մեծ, կլոր գնդակ էլ է ներս գցում, շամփուրով ամրացնում և զույգ գնդակներն էլ արձակում քարայծի վրա: Կրակելուն պես մի մարդկային ճիչ է լսում: Վազում տեսնում է, որ իր սպանածը մարդ է՝ այծի մորթու մեջ...

- Ա՛յ մարդ, ինձ ինչի՞ արյան տակ գցեցիր,- գոչում է որսորդը սարսափած:

27. *Թվարկվածներից ո՞րն է շեշտ ստանում:*

- ☐ **եմ** օժանդակ բայը – ճիչ **է** լսում
- ☐ **մի** անորոշ դերանունը – **մի** մեծ, կլոր գնդակ
- ☐ **էլ** շաղկապը – զույգ գնդակներն **էլ** արձակում
- ☐ ստորոգելին – իր սպանածը **մարդ** է

28. *Կա երեք տեսակի փող՝*

1. փող *«դրամ»,*

2. փող *«տարբեր առարկաների, այդ թվում՝ հրազենի խողովակաձև մասը»,*

3. փող *«պարանոց»:*

Դրանք ձևով նույն, իմաստով տարբեր բառեր են, այսինքն ինչ են:

.....

29. **Շամփուր** *բառի ո՞ր իմաստն է հանդիպում այս հատվածում:*

- ☐ մի ծայրը սուր երկաթե բարակ ձող, որ գործածվում է որպես խորոված անելու հարմարանք
- ☐ երկաթե սրածայր երկար ձող թոնրից հաց հանելու համար
- ☐ երկաթե բթածայր ձող հրազենից փողը մաքրելու կամ լիցքը փողի մեջ մղելու համար (անցյալում)

30. *Ինչպե՞ս ես հասկանում* **արյան տակ գցել** *արտահայտությունը:*

.....

.....

31. *Կապույտ գրվածն ինչ է:*

.....

32. *Առաջին նախադասության ենթական զեղչվա՞ծ է:*

☐ այո ☐ ոչ

33. *Ո՞ր դեպքում ձևաբանական և շարահյուսական վերլուծության սխալ կա:*

☐ **իր** – անձնական դերանուն, 3-րդ դեմք, եզակի թիվ, սեռական հոլով, դերանվանական հոլովում. հատկացուցիչ

☐ **հին** – հարաբերական ածական, դրական աստիճան. որոշիչ

☐ **գնդակ** – հասարակ գոյական, եզակի թիվ, հայցական հոլով, ի հոլովում, անորոշ առում. ուղիղ խնդիր

☐ **որ** – ստորադասական շաղկապ, նախադասության անդամ չէ

34. *Ուղղակի խոսքը դարձրո՛ւ անուղղակի:*

.....

.....

35. *Փոխիր ուղղակի խոսքի շարադրությունը:*

.....

.....

36. *Հատվածում գործածված* **ինչի՞** *և* **ինչու՞** *հարցական դերանունները գրիր համապատասխան տողի վրա:*

ա) գրական .....

բ) խոսակցական .....

37. **Ինչու՞ համար** *կապակցությունը ճիշտ է:*

☐ այո ☐ ոչ

Չորրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Այդտեղ այծի մորթով մարդը պատմում է իր խորամանկության մասին և հոգին փչում է:

Որսորդը նրան թաղում է, գերեզմանին մի տափակ քար է գցում ու վրան փորագրում հետևյալ խրատական խոսքը. «Ով իր մորթին փոխի, զույգ գնդակի կպատահի»:

38. *Մեկ բառով ինչպես կասես* **հոգին փչել**:

.....

39. **Հոգին փչել** *դարձվածքի իմաստն արտահայտող (հոմանիշ) երկու դարձվածք գրիր:*

ա) .....

բ) .....

40. *Ո՞ր բառը վերջածանցավոր չէ:*

☐ խորամանկություն ☐ որսորդ
☐ գերեզման ☐ գնդակ
☐ խրատական ☐ խոսք

41. *Բաղադրիչները միացրո՛ւ և կազմիր հոմանիշ բարդ բառեր:*

ա) **շիրիմ+քար** .....

բ) **տապան+քար** .....

42. *Ինչ դերանուններ են:*

ա) **այդտեղ** .....

բ) **իր** .....

գ) **մի** .....

դ) **ով** .....

43. *Ո՞ր շարքի բոլոր բառերն են նույն խոսքի մասին պատկանում:*

☐ ինքը, նա, վրան, մի, ով
☐ այծ, մորթի, մարդ, խորամանկություն, այդտեղ, խոսք
☐ պատմել, թաղել, փորագրել, փոխել, պատահել, հոգին փչել
☐ տափակ, զույգ, հոգի, հետևյալ, խրատական

44. *Ո՞ր դեպքում բայի եղանակի և ժամանակի ներկայացման սխալ կա:*

☐ **պատմում է** – սահմանական եղանակ, ներկա ժամանակ
☐ **փոխի** – սահմանական եղանակ, ապառնի ժամանակ
☐ **կպատահի** – ենթադրական եղանակ, ապառնի ժամանակ

45. *Նախադասության ինչ անդամ է* **խորամանկության մասին**:

☐ ուղիղ խնդիր
☐ հանգման անուղղակի խնդիր
☐ ներգործող անուղղակի խնդիր
☐ վերաբերության անուղղակի խնդիր

46. *Կապույտ գրվածները նախադասության ինչ անդամներ են:*

ա) .....
բ) .....
գ) .....
դ) .....

47. *Մեջբերվող խոսքը կազմությամբ ինչպիսի նախադասություն է:*

☐ պարզ ընդարձակ նախադասություն
☐ բարդ համադասական նախադասություն
☐ բարդ ստորադասական նախադասություն

48. *Գրական հայերենում ընդունելի է, երբ* **գցել** *բայը* **ք**-*ով են արտասանում:*

☐ այո ☐ ոչ

Հարցարան 7

1. - Նա գրավաճառն է,- ձեռքը ուսիս դնելով՝ ասաց հետևիս կինը:

Ես, իհարկե, հասկացել էի այդ, բայց կնոջ խոսքերը, այնուամենայնիվ, հաճելի հնչեցին ականջիս:

Վերջապես ծերուկը ներս թողեց մեզ: Ես վազեցի և առաջինը կանգնեցի վաճառասեղանի առջև ու դրամը դողալով մեկնեցի:

2. - Տվեք «Երեք հրացանակիրները»,- համարյա աղերսեցի ես:

Ծերուկն ինձ չէր լսում: Նայում էի նրա աչքերի մեջ և սարսափով զգում, որ նրա աչքերը երբեք չեն ուղղվելու իմ կողմը: Նրանք ինձ չէին տեսնում և երբեք չէին տեսնելու: Ես ուղղակի չկայի: Ես սկսեցի ապացուցել, որ ես կամ. թխկթխկացրի վաճառասեղանի ապակին: Նրա հայացքն իմ գլխավերևում էր, և ես չէի կարողանում ցույց տալ, որ ես գոյություն ունեմ...

3. Ծերուկը դանդաղորեն մի գիրք տվեց կողքիս կանգնածին: Երկար ձգվում էին րոպեները: Անհամբերությունս այլևս չափ չուներ: Հետո գրավաճառը մոտեցավ ցուցափեղկին, և լեզուս կապ ընկավ: Ծերուկը, ցուցափեղկից մի գիրք վերցնելով, բերեց տվեց մի ուրիշ կնոջ: Դա «Երեք հրացանակիրները» չէր:

4. - Ես առաջինն եմ, խնդրում եմ, քեռի, շատ եմ խնդրում, տվեք «Երեք հրացանակիրները»:

Նրա ժպտուն, գործնական հայացքն ինձ չէր տեսնում, և ես անզոր էի: Քրտնել էի հուզմունքից և վախից...

Ու հանկարծ անէացած տեսա, թե ինչպես գիրքը... «Երեք հրացանակիրները» փայլատակեց նրա ձեռքում, մոտեցավ ինձ և իմ գլխավերևով փոխանցվեց ուրիշ ձեռքերի մեջ...

5. Գրախանութի իրերի շրջագծերն աղոտացան, և ես սրտխառնուք զգացի:

Ես երկար կանգնած էի վաճառասեղանի մոտ ու արդեն լուռ էի...

Դուրս եկա փողոց: Արևոտ օրը, մարդկանց շարժումն ինձ չէին վերաբերում և լրիվ անիմաստ էին... Ես առաջին անգամ իմ կյանքում զգացի, թե ինչ ծանր, հեղձուցիչ, տհաճ համ ունի անարդարությունը... Դա առաջին անարդարությունն էր իմ կյանքում...

Ա. Այվազյան, «Գրախանութ»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Պատմվածքի (այս հատվածի) հիմնական թեման ո՞րն է:*

- ☐ երեխայի ընթերցասիրությունը
- ☐ «Երեք հրացանակիրները» վեպը
- ☐ գրավաճառի ապաշնորհությունը
- ☐ կյանքում հանդիպող անարդարությունը

2. *Նկարագրվող դեպքը ա՞յս օրերի մասին է:*

☐ այո ☐ ոչ

3. *Հակիրճ գրիր մարդկային որևէ դրական հատկանիշի մասին:*

_____

_____

_____

_____

4. *Գրիր քեզ հետ պատահած (կամ քեզ հայտնի) մի անարդարության մասին:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առաջին հատվածին վերաբերող առաջադրանքներ

- Նա գրավաճառն է,- ձեռքը ուսիս դնելով՝ ասաց հետևիս կինը:

Ես, իհարկե, հասկացել էի այդ, բայց կնոջ խոսքերը, այնուամենայնիվ, հաճելի հնչեցին ականջիս:

Վերջապես ծերուկը ներս թողեց մեզ: Ես վազեցի և առաջինը կանգնեցի վաճառասեղանի առջև ու դրամը դողալով մեկնեցի:

5. *Ո՞ր բառում շեշտը վերջին վանկի ձայնավորի վրա չի դրվում:*

☐ գրավաճառ ☐ իհարկե
☐ այնուամենայնիվ ☐ վերջապես

6. **Գրավաճառ** *բառի մեջ ինչ հնչյունափոխություն կա:*

.....

7. *Ո՞ր բառն ածանցավոր չէ:*

☐ հաճելի ☐ վերջապես
☐ ծերուկ ☐ վաճառասեղան

8. *Հատվածից ընտրիր և մեկական օրինակ գրիր համապատասխան տողի վրա:*

ա) ցուցական դերանուն .....
բ) դասական թվական .....
գ) կապ .....
դ) հաստատական վերաբերական.....

9. *Ձևաբանորեն վերլուծիր կապույտ գրված բառերը:*

ա) .....
բ) .....
գ) .....
դ) .....
ե) .....

10. *Նախադասության ինչ անդամ են կապույտ գրված բառերը:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

ե) .....

11. *Տրված բառերից որո՞նք նախադասության անդամ չեն:*

☐ իհարկե ☐ այդ

☐ բայց ☐ հաճելի

☐ մեզ ☐ այնուամենայնիվ

12. **Բայց** *շաղկապն ինչ իմաստ է արտահայտում:*

☐ միավորական ☐ հավելական

☐ ներհակական ☐ մեկնական

13. *Հատվածի վերջին նախադասությունն ինչպիսին է:*

☐ բարդ համադասական

☐ բարդ ստորադասական

14. *Փոխիր ուղղակի խոսքի շարադասությունը:*

.....

.....

15. *Նախադասության մեջ* **իհարկե** *բառը երկու կողմից տրոհվել է ստորակետերով: Ինչո՞ւ:*

.....

16. *Քանի՞ բաղադրիչ նախադասություններից է կազմված հատվածի վերջին նախադասությունը:*

.....

Երկրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

- Տվե՞ք «Երեք հրացանակիրները»,- համարյա աղերսեցի ես:

Ծերուկն ինձ չէր լսում: Նայում էի նրա աչքերի մեջ և սարսափով զգում, որ նրա աչքերը երբեք չեն ուղղվելու իմ կողմը: Նրանք ինձ չէին տեսնում և երբեք չէին տեսնելու: Ես ուղղակի չկայի: Ես սկսեցի ապացուցել, որ ես կամ. թխկթխկացրի վաճառասեղանի ապակին: Նրա հայացքն իմ գլխավերևում էր, և ես չէի կարողանում ցույց տալ, որ ես գոյություն ունեմ...

17. *Գրիր* **աղերսել** *բայի հոմանիշները (առաջին տառերը տրված են):*

ա) **խ**.....

բ) **ա**.....

գ) **թ**.....

դ) **պ**.....

18. *Ո՞ր բառն է կազմությամբ ածանցավոր:*

☐ հրացանակիր ☐ ուղղակի

☐ վաճառասեղան ☐ գլխավերև

19. *Կազմիր հետևյալ գոյականների հոգնակիի ձևերը:*

ա) **ջահակիր**.....

բ) **զորամաս**.....

գ) **ձեռագիր**.....

դ) **դավադիր** .....

20. *Հատվածից ընտրիր և անձնական դերանվան մեկական օրինա՛կ գրիր համապատասխան տողի վրա:*

ա) ուղղական հոլով .....

բ) սեռական հոլով .....

գ) տրական (հայցական) հոլով .....

21. *Ձևաբանորեն վերլուծիր կապույտ գրված բայերը:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

22. *Գտիր հատվածում գործածված ժամանակի մակբայը և գրիր:*

.....

23. **Երեք հրացանակիրներ** *կապակցության մեջ* **երեք**-*ն ինչ է:*

☐ ենթակա ☐ որոշիչ

☐ բացահայտիչ ☐ չափ ու քանակի պարագա

24. *Առաջին նախադասության բայն ինչո՞ւ է բացականչական նշանով գործածվել:*

.....

.....

25. *Հատվածից ընտրիր և մեկական օրինա՛կ գրիր համապատասխան տողի վրա:*

ա) ենթակա.....

բ) հատկացուցիչ .....

գ) ստորոգյալ .....

դ) ուղիղ խնդիր.....

ե) ձևի պարագա .....

զ) ժամանակի պարագա.....

26. *Հատվածի բարդ ստորադասական նախադասությունների երկրորդական նախադասություններն ինչպես են կապակցվել գլխավոր նախադասություններին:*

.....

Երրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Ծերուկը դանդաղորեն մի գիրք տվեց կողքիս կանգնածին: Երկար ձգվում էին րոպեները: Անհամբերությունս այլևս չափ չուներ: Հետո գրավաճառը մոտեցավ ցուցափեղկին, և լեզուս կապ ընկավ: Ծերուկը, ցուցափեղկից մի գիրք վերցնելով, բերեց տվեց մի ուրիշ կնոջ: Դա «Երեք հրացանակիրները» չէր:

27. *Լրացրո՛ւ* **ղ** *կամ* **խ**: *Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում* **ղ** *գրվում:*

☐ լեռնաշ...թա, ա...տահարվել, կե...ծավոր

☐ ա...ճատել, անխա...տ, բարեմա...թանք

☐ խե...կատակ, ապակեփե...կ, սանդու...ք

☐ գա...տնածածուկ, ու...տավայր, ա...բակույտ

28. *Լրացրո՛ւ* **խ** *կամ* **ղ**: *Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում* **խ** *գրվում:*

☐ բա...տորոշ, կմա...ք, ե...կելի, ժանտա...տ

☐ զմրու...տ, թ...կի, վա....ճան, ապերա...տ

☐ զե...ություն, դժո...ք, զե...չել, նա...կին

☐ դրա...տային, լայնափո...ք, ա...տորոշում, ս...տոր

29. *Ճիշտ է, որ* **լեզուն կապ ընկնել** *դարձվածքը նշանակում է «խոսելու ունակությունից զրկվել, պապանձվել»:*

☐ այո ☐ ոչ

30. *Գրիր հատվածում հանդիպող այս հոդերի տեսակները:*

ա) անհամբերությունս .....

բ) հրացանակիրները .....

31. *Գրիր տրված գոյականների հոլովները և հոլովումները:*

ա) **Անհամբերությունս** այլևս չափ չուներ:

.....

բ) Հետո գրավաճառը մոտեցավ **ցուցափեղկին**:

.....

գ) Տվեց մի ուրիշ **կնոջ**:

.....

32. *Ո՞ր բայն է կազմությամբ պարզ:*

☐ կանգնել ☐ ձգվել

☐ մոտենալ ☐ ընկնել

33. *Լրացրո՛ւ երկուական օրինակ ընտրելով հատվածից:*

ա) բայի անդեմ ձևեր .....

բ) բայի դիմավոր ձևեր.....

34. *Կապույտ գրվածներն ինչ պարագաներ են:*

ա) .....

բ) .....

գ) .....

35. *Միջադաս դերբայական դարձվածը դարձրո՛ւ առաջադաս:*

Ծերուկը, ցուցափեղկից մի գիրք վերցնելով, բերեց տվեց մի ուրիշ կնոջ:

.....

.....

36. *Ո՞ր նախադասությունն է սխալ:*

☐ Աղասի Այվազյանը արդի ժամանակաշրջանի հայ ինքնատիպ գրողներից է:

☐ Աղասի Այվազյանը դա արդի ժամանակաշրջանի հայ ինքնատիպ գրողներից է:

Չորրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

- Ես առաջինն եմ, խնդրում եմ, քեռի՛, շատ եմ խնդրում, տվե՛ք «Երեք հրացանակիրները»:

Նրա ժպտուն, գործնական հայացքն ինձ չէր տեսնում, և ես անզոր էի: Քրտնել էի հուզմունքից և վախից...

Ու հանկարծ անէացած տեսա, թե ինչպես գիրքը... «Երեք հրացանակիրները» փայլատակեց նրա ձեռքում, մոտեցավ ինձ և իմ գլխավերևով փոխանցվեց ուրիշ ձեռքերի մեջ...

37. *Ո՞ր բառը հոմանիշ չէ* **անէանալ**-*ին:*

☐ անհետանալ ☐ աներևութանալ
☐ վերանալ ☐ վերջանալ

38. *Հոմանիշ են արդյոք* **փայլել** *և* **փայլատակել** *բառերը:*

☐ այո ☐ ոչ

39. *Ո՞ր բառն է տարբերվում մյուսներից ըստ ածանցի դիրքի:*

☐ ժպտուն ☐ գործնական
☐ անզոր ☐ հուզմունք

40. *Ինչ դիմելաձև է գործածվել այս հատվածում:*

.....

41. *Ինչ բառեր են գործածում, երբ դիմում են՝*

ա) անծանոթ կնոջը .....

բ) պաշտոնյա տղամարդուն .....

գ) անծանոթ երիտասարդ աղջկան .....

դ) անծանոթ ծեր կնոջը .....

ե) քահանային .....

42. *Գրիր տրված քանակական թվականների դասականները:*

ա) **երկու** .....

բ) **երեք** .....

գ) **չորս** .....

դ) **հինգ** .....

43. *Ուղղակի խոսքում գործածված հրամայական եղանակի* **տվեք** *ձևն ինչ է ցույց տալիս:*

☐ հրաման ☐ կոչ

☐ խնդրանք ☐ խրատ

44. *Հատվածից ընտրիր և գրիր համապատասխան տողի վրա:*

ա) անորոշ դերանուն .....

բ) կապ.....

գ) համադասական շաղկապ .....

դ) ստորադասական շաղկապ .....

45. *Կապույտ գրվածներից ընտրիր և գրիր համապատասխան տողի վրա:*

ա) ենթակա .....

բ) ստորոգյալ.....

գ) հատկացուցիչ .....

դ) որոշիչ .....

ե) ուղիղ խնդիր.....

զ) տեղի պարագա .....

է) ձևի պարագա .....

ը) պատճառի պարագա .....

թ) չափ ու քանակի պարագա .....

46. *Պարբերությունը կարո՞ղ է շաղկապով սկսվել:*

☐ այո ☐ ոչ

Հինգերորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

1) Գրախանութի իրերի շրջագծերն աղոտացան, և ես սրտխառնուք զգացի:

2) Ես երկար կանգնած էի վաճառասեղանի մոտ ու արդեն լուռ էի...

3) Դուրս եկա փողոց: 4) Արևոտ օրը, մարդկանց շարժումն ինձ չէին վերաբերում և լրիվ անիմաստ էին... 5) Ես առաջին անգամ իմ կյանքում զգացի, թե ինչ ծանր, հեղձուցիչ, տհաճ համ ունի անարդարությունը... 6) Դա առաջին անարդարությունն էր իմ կյանքում...

47. *Առաջին նախադասությունից դո՛ւրս գրիր ձայնավորի հնչյունափոխություն ունեցող երեք բառերը:*

ա)..... բ)..... գ).....

48. *Ի՞նչ է նշանակում* **հեղձուցիչ** *բառը:*

☐ մեռյալ ☐ խեղդող
☐ նողկալի ☐ սահմռկեցուցիչ

49. *Կազմությամբ ինչպիսի՞ն է* **տհաճ** *բառը:*

☐ պարզ ☐ ածանցավոր

50. *Կարո՞ղ ենք ասել, որ* **շրջագիծ** *և* **շրջանագիծ** *բառերը նույն արմատներից են կազմված:*

☐ այո ☐ ոչ

51. *Թվահամարներով գրիր, թե ո՛ր նախադասության մեջ ենթական ինչո՛վ է արտահայտվել:*

ա) գոյականով .....
բ) դերանվամբ .....

52. *Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:*

☐ Ուղեղի աշխատանքը լավացնում է միայն այն երաժշտությունը, որին մենք չեզոք ենք վերաբերվում:

☐ Գործընկերները հարգանքով էին վերաբերվում արտասահմանում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդին:

☐ Գիտաժողովից հետո մի քանի տարվա ընթացքում հավաքվեցին անհետացող կենդանիների և բույսերի տարբեր տեսակներին վերաբերող բոլոր տեղեկությունները:

☐ Աշակերտն այդպես էլ չիմացավ, թե որ հերոսին է վերաբերվում պոեմի այդ քառատողը:

53. *Հատվածի ո՞ր երրորդ նախադասության մեջ է ենթական զեղչվել:*

.....

54. *Հատվածից դո՛ւրս գրիր համապատասխան ստորոգյալները (երկուական):*

ա) պարզ .....

բ) բաղադրյալ .....

55. *Հատվածից դո՛ւրս գրիր բազմակի որոշիչները՝ իրենց որոշյալով:*

.....

56. *Գրիր, թե կապույտ գրվածները նախադասության ինչ անդամներ են:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

57. *Նախադասությունների տեսակների դիմաց գրիր համապատասխան համարները:*

ա) պարզ ընդարձակ .....

բ) բարդ համադասական .....

գ) բարդ ստորադասական .....

Հարցարան 8

1. Ուղիղ լուսամուտիս առաջ ածում, բարձրանում էր մի մարդահասակ եղևնի: Ամեն առավոտ, երբ մոտենում էի լուսամուտիս, իմ առաջին հայացքն ընկնում էր դրա վրա, և նա ասես ժպտում էր ինձ իր կանաչ հանդերձներով, ժպտում էր մանավանդ ձմռանը:

- Տեսնո՞ւմ ես,- կարծես ասում էր նա:- Ես ցրտից չեմ վախենում...

2. Նայելով նրան՝ ես նույնպես ժպտում էի, որ նա իրոք հերոս է, չի վախենում ո՛չ քամուց, ո՛չ ձյունից, ո՛չ ցրտից... Ու ինձ համակում էր մի ուրախ զգացում: Ահա թե ինչպիսին պետք է լինել...

Եվ ձմռան ցուրտը, բուքը սարսափելի չէին թվում ինձ:

3. Ահա ինչպե՛ս է դիմանում այս փոքրիկ ծառը... Ոչ միայն դիմանում. չի ընկճվում բնավ. աշխարհին նայում է միշտ ուրախ, միշտ զվարթ... Ու փոքրիկ ծառը դառնում էր ինձ սիրելի, այնքա՛ն սիրելի, որ թվում էր հարազատ, և ուզում էի, որ նա մնա միշտ այդպես լավ ու խիզախ...

4. Բայց այսօր՝ այս առավոտ, երբ նոր զարթնած՝ սովորականի պես մոտենում եմ լուսամուտիս, եղևնին չկա... Այո՛, նա՝ իմ կանաչ եղևնին, չկա... Նրա տեղում մնացել է սղոցով կտրած բունը...

Ինչ է պատահել... Նայում եմ իրարից հեռու տնկված եղևնիներին, նրա հասակակից եղևնիներին... Նրանք կանգուն են: Ինչպես միշտ կանաչազգեստ, կատարները խրոխտ վեր պարզած:

5. Իսկ իմ եղևնին... Ո՞վ է կտրել նրան և ինչո՞ւ...

Մտածում եմ ու գտնում հանկարծ: Վաղը Նոր տարի է... կտրել-տարել են տոնածառ սարքելու... Ու միտքս գնում է կտրող-տանողի տունը. ինչպե՞ս է զգում նա այդ ծառի առաջ, ծառ, որին զրկել է կյանքից մի քանի օր ուրախանալու համար...

6. Իսկ դեռատի ծառը, որ տարին բոլոր ուրախացնում էր ամենքին, հիմա չորս պատերի մեջ մեռնում է զարդարված...

Եվ քանի՜ հազարավորներ այդպես...

Ստ. Զորյան, «Եղևնին»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Ըստ հաղորդակցման նպատակի տարբերակվող ո՞ր տեսակի նախադասությունները կան բնագրում: Յուրաքանչյուր տեսակի դիմաց գրիր համապատասխան հատվածի համարը:*

ա) պատմողական _____

բ) հարցական _____

գ) հրամայական _____

դ) բացականչական _____

2. *Բնագրում ինչո՞ւ են այսքան կախման կետեր գործածվել:*

_____

_____

_____

3. *Շարադրիր քո մտորումները Հայաստանի բնության պահպանության մասին:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առաջին հատվածին վերաբերող առաջադրանքներ

Ուղիղ լուսամուտիս առաջ աճում, բարձրանում էր մի մարդահասակ եղևնի: Ամեն առավոտ, երբ մոտենում էի լուսամուտիս, իմ առաջին հայացքն ընկնում էր դրա վրա, և նա ասես ժպտում էր ինձ իր կանաչ հանդերձներով, ժպտում էր մանավանդ ձմռանը:

- Տեսնո՞ւմ ես,- կարծես ասում էր նա:- Ես ցրտից չեմ վախենում...

4. *Լրացրո՛ւ* **ղղ** *կամ* **ղ** *տառերը:*

Ու...ահայաց, գործու...ում, ու...արկել, ու...ակի, ու...եբեռ, ու...եվճար, ու...ձիգ, ու...ագրություն:

5. *Ո՞ր բառը հոմանիշ չէ* **վախենալ** *բային:*

☐ երկյուղել ☐ պատկառել
☐ սարսափել ☐ երկնչել

6. *Այս նախադասություններում գործածված* **հանդերձ**-*ները ինչ են նշանակում:*

ա) Եղևնին ասես ժպտում էր ինձ իր կանաչ **հանդերձներով**:

.....

բ) Ընտանյոք **հանդերձ** հրավիրվել ենք հարսանիքի:

.....

7. *Գրիր հետևյալ գոյականների սեռական հոլովաձևը:*

ա) **եղևնի** .....

բ) **առավոտ** .....

գ) **լուսամուտ** .....

դ) **ցուրտ** .....

8. *Ո՞ր դերանվան տեսակն է սխալ գրված:*

☐ **մի** – ժխտական ☐ **երբ** – հարաբերական
☐ **ամեն** – որոշյալ ☐ **ես** – անձնական

9. *Զևաբանորեն վերլուծիր այս դերանունները:*

ա) **ինձ** .....

բ) **իր** .....

10. **Մանավանդ** *բառն ինչ վերաբերական է:*

☐ հաստատական ☐ սաստկական

☐ գնահատողական ☐ սահմանափակման

11. *Դեմ դիմաց գրիր հատվածում գործածված հոմանիշ երկբայական վերաբերականները:*

.....

12. *Տրված կապակցությունների թավ գրված բաղադրիչները ո՞ր խոսքի մասին են պատկանում:*

ա) լուսամուտիս **առաջ** .....

բ) դրա **վրա** .....

13. *Երկրորդ նախադասությունից դո՛ւրս գրիր ժամանակի պարագաները:*

ա) .....

բ) .....

14. *Կապույտ գրված նախադասությունն ինչ է, ինչ շարադասություն ունի:*

.....

15. *Փոխիր ուղղակի խոսքի շարադասությունը:*

.....

.....

16. **Եղևնին ժպտում էր ինձ** *նախադասության մեջ ոճական ինչ երևույթի հետ գործ ունենք:*

.....

17. **Վախում եմ** *ձևը ճիշտ է:*

☐ այո ☐ ոչ

Երկրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Նայելով նրան՝ ես նույնպես ժպտում էի, որ նա իրոք հերոս է, չի վախենում ո՛չ քամուց, ո՛չ ձյունից, ո՛չ ցրտից... Ու ինձ համակում էր մի ուրախ զգացում: Ահա թե ինչպիսի՞ն պետք է լինել...

Եվ ձմռան ցուրտը, բուքը սարսափելի չէին թվում ինձ:

18. *Ո՞ր բառը հոմանիշ չէ* **համակել** *բային:*

☐ պարուրել ☐ պատել
☐ լիացնել ☐ տոգորել

19. *Ո՞րը հոմանիշ չէ* **սարսափելի** *բառին:*

☐ զարհուրելի ☐ սոսկալի
☐ ահաբեկել ☐ ահարկու

20. **Բուք** *նշանակում է «ձյունախառն սաստիկ քամի»: Կարո՞ղ ենք ասել, որ այն հոմանիշ է* **քամի** *բառին:*

☐ այո ☐ ոչ

21. *Ո՞ր բառը դերանուն չէ:*

☐ նույնպես ☐ ինձ
☐ ահա ☐ ինչպիսին

22. *Ձևաբանորեն վերլուծիր կապույտ գրված բառերը:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

ե) .....

զ) .....

է) .....

23. **Իրոք** *բառն ինչ վերաբերական է:*

☐ հաստատական ☐ գնահատողական

☐ սաստկական ☐ սահմանափակման

24. **Ինչպիսի** *դերանունը գործածիր նախադասության մեջ:*

ա) հարցական հնչերանգով .....

.....

բ) բացականչական հնչերանգով .....

.....

25. *Տրված բառերը նախադասության ինչ անդամ են:*

ա) **հերոս է**.....

բ) **ուրախ** .....

գ) **զգացում** .....

26. *Ո՞րերորդ նախադասությունն է բարդ ստորադասական:*

.....

27. *Երկրորդական նախադասությունն ինչո՞վ է կապակցվել գլխավոր նախադասությանը:*

.....

28. *Ըստ հեղինակի՝ մարդն ինչպիսին պիտի լինի:*

.....

.....

.....

.....

29. *Գրական հայերենում ո՞ր ձևն է ճիշտ:*

☐ Նա համարձակ չէ: ☐ Նա համարձակ չի:

Երրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Ահա ինչպե՛ս է դիմանում այս փոքրիկ ծառը... Ոչ միայն դիմանում. չի ընկճվում բնավ. աշխարհին նայում է միշտ ուրախ, միշտ զվարթ... Ու փոքրիկ ծառը դառնում էր ինձ սիրելի, այնքա՛ն սիրելի, որ թվում էր հարազատ, և ուզում էի, որ նա մնա միշտ այդպես լավ ու խիզախ...

30. *Որտեղ անհրաժեշտ է, ավելացրո՛ւ* **հ** *տառը:*

Համաշխար...այինն, շնոր...ակալություն, արհավիր...ք, խոնար..., ճանապար...որդ, հեղ...եղատ, հեղ...եղուկ, նիր...ել, արհամար....ել, անշնոր...ք, ընդ...անուր, ընդ...արձակել, ընդ...ամենը, խոր...ուրդ, խոնար...վել:

31. *Ո՞րը հոմանիշ չէ* **ընկճվել** *բային:*

☐ վհատվել ☐ դրվատվել
☐ հուսահատվել ☐ հուսալքվել

32. *Ո՞րը հոմանիշ չէ* **զվարթ** *բառին:*

☐ կայտառ ☐ ժրաջան
☐ աշխույժ ☐ առույգ

33. *Ճիշտ է, որ* **համակրելի** *և* **սիրելի** *բառերը հոմանիշ են:*

☐ այո ☐ ոչ

34. **Աշխարհ** *բառն ըստ իմաստի ինչպիսին է:*

☐ մենիմաստ ☐ բազմիմաստ

35. *Տրված բառերից որի մեջ է* **-իկ** *վերջածանցը նվազական իմաստ արտահայտում:*

☐ մայրիկ ☐ պապիկ
☐ քաղցրիկ ☐ պատուհանիկ

36. *Տրվածներից ո՞րը ցուցական դերանուն չէ:*

☐ ինչպես ☐ այս

☐ այդպես ☐ այնքան

37. *Կապույտ գրված դիմավոր բայերը վերլուծիր ձևաբանորեն:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

38. **Բնավ** *բառը, որ նշանակում է «ամենևին, բոլորովին», գործածիր պատասխանական բառի նշանակությամբ (իբրև* **ոչ**-*ի համարժեք):*

.....

.....

39. *Ո՞ր նախադասության մեջ է* **որպեսզի** *շաղկապը սխալ գործածվել:*

☐ Երիտասարդը խոսքի կեսին կանգ առավ, աչքերը կախ գցեց, **որպեսզի** չտեսնի այդ մարդու տհաճ ու անվճռական դեմքը:

☐ Թուրքիայի խորհրդարանի մի պատգամավոր առաջարկեց, **որպեսզի** օրենսդիր մարմինն ընդունի Ֆրանսիան դատապարտող բանաձև:

☐ - **Որպեսզի** երկրորդ անգամ չգամ քո հետևից, դու հեռվից հետևիր մեզ, Սուրե՛ն,- առաջարկում է Տիգրանը:

☐ Ազատամարտիկը զոհվել է, **որպեսզի** Սոս գյուղում այսօր երդիկից ծուխ ելնի, երդիկները շատանան:

40. **Այնքան** *դերանունը նախադասության մեջ գործածիր բացականչական հնչերանգով:*

.....

.....

Չորրորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Բայց այսօր՝ այս առավոտ, երբ նոր զարթնած՝ սովորականի պես մոտենում եմ լուսամուտիս, եղևնին չկա... Այո՛, նա՝ իմ կանաչ եղևնին, չկա... Նրա տեղում մնացել է սղոցով կտրած բունը...

Ի՞նչ է պատահել... Նայում եմ իրարից հեռու տնկված եղևնիներին, նրա հասակակից եղևնիներին... Նրանք կանգուն են: Ինչպես միշտ կանաչազգեստ, կատարները խրոխտ վեր պարզած:

41. *Լրացրո՛ւ* **դ** *կամ* **թ**: *Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում* **դ** *գրվում:*

☐ որ...ատունկ, խոր...անալ, հար...աքանդակ

☐ հեր...ական, որ...նել, բր...ել («հրել»)

☐ զար...ուցիչ, եր...իկ, բր...ուճ

☐ ար...նանալ, Սե...րակ, խոր...ուբորդ

42. *Որտեղ անհրաժեշտ է, գրիր* **և** *կամ* **եվ**:

սեթ.....եթել, հ.....հհ....., գեր.....արել, առ.....անգել, հոգ.....արք, տար.....երջ, սերկ.....իլ, ոսկ.....ազ, կար.....որ, հոգ.....որական, ոսկ.....որել, կար.....որություն:

43. *Եթե* **խրոխտ** *նշանակում է «հպարտ, սեգ», «համարձակ, հանդուգն», «հզոր, հաղթական», ապա այն ըստ իմաստի ինչպիսի՞ բառ է:*

☐ մենիմաստ ☐ բազմիմաստ

44. *Ինչ է նշանակում* **բուն** *«ծառի (թփի) վերերկրյա մասը առանց ճյուղերի» բառի համանունը: Օրինակ՝* **բուն միտքը**:

.....

45. *Ո՞ր բառը կազմությամբ բարդ չէ:*

☐ այսօր ☐ լուսամուտ

☐ սովորական ☐ կանաչազգեստ

46. *Ո՞ր բայը կազմությամբ պարզ չէ:*

☐ զարթնել ☐ մոտենալ
☐ մնալ ☐ պատահել

47. *Հատվածից դո՛ւրս գրիր դերբայական դարձվածները:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

48. *Այս հատվածում ո՞րն է բուն բացահայտիչը:*

.....

49. *Կապույտ գրվածները նախադասության ինչ անդամներ են:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

50. *Քանի՞ բաղադրիչ նախադասություններից է բաղկացած առաջին նախադասությունը:*

.....

51. **Այո** *հաստատական վերաբերականի ո՞ր հոմանիշն է համարվում խոսակցական:*

☐ իհարկե ☐ անշուշտ
☐ հա ☐ հարկավ

52. **Ինչ** *դերանունը նախադասության մեջ գործածիր բացականչական հնչերանգով:*

.....

.....

Հինգերորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Իսկ իմ եղևնին... Ո՞վ է կտրել նրան և ինչո՞ւ...

Մտածում եմ ու գտնում հանկարծ: Վաղը Նոր տարի է... կտրել-տարել են տոնածառ սարքելու... Ու միտքս գնում է կտրող-տանողի տունը. ինչպե՞ս է զգում նա այդ ծառի առաջ, ծառ, որին զրկել է կյանքից մի քանի օր ուրախանալու համար...

53. **Նոր տարի** *անվան հոմանիշը՝* **Աման...ր**, *ինչպե՞ս է գրվում: Գրիր ընտրածդ տարբերակի կողքին:*

☐ **ո**-ով ..... ☐ **օ**-ով .....

54. *Գրիր՝ փակագծերը հանելով: Ո՞ր շարքի բոլոր բառերն են գծիկով գրվում:*

☐ կաս (կարմիր), նետ (աղեղ), կտրել (կարել)

.....

☐ (զուգել) զարդարել, (մուգ) կարմիր, տուն (թանգարան)

.....

☐ երգ (երաժշտություն), թև (թևի), (տարեց) տարի

.....

☐ հարավ (արևելք), (ոտքից) գլուխ, թև (թիկունք)

.....

55. *Գրիր՝ փակագծերը հանելով: Ո՞ր շարքի բոլոր հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են մեծատառ գրվում:*

☐ (Ա/ա)րժույթի (Մ/մ)իջազգային (Հ/հ)իմնադրամ, (Հ/հ)այոց (Ա/ա)շխարհ, (Ա/ա)ռևմտյան (Հ/հ)այաստան

.....

.....

☐ Տավուշի (Մ/մ)արզ, (Մ/մ)իավորված (Ա/ա)զգերի (Կ/կ)ազմակերպություն, (Հ/հ)այաստանի (Ա/ա)զգային (Պ/պ)ատկերասրահ

.....

.....

☐ (Ն/ն)որ (Ն/ն)ախիջևան, (Մ/մ)եծ (Մ/մ)ասիս, (Հ/հ)այաստանի (Հ/հ)անրապետություն

.....

.....

☐ (Մ/մ)այրության և (Գ/գ)եղեցկության (Տ/տ)ոն, (Մ/մ)եծ (Հ/հ)այք, (Հ/հ)այոց (Ձ/ձ)որ

.....

.....

56. *Ի՞նչ է* **մի քանի**-*ն:*

☐ ցուցական դերանուն ☐ անորոշ դերանուն

☐ որոշյալ դերանուն ☐ չափ ու քանակի մակբայ

57. *Նախադասության ինչ անդամ են հարցական դերանունները:*

ա) **ո՞վ** .....

բ) **ինչո՞ւ** .....

գ) **ինչպե՞ս** .....

58. *Ո՞ր դեպքում է ձևաբանական վերլուծությունը սխալ:*

☐ **այդ** – ցուցական դերանուն

☐ **սարքելու** – ապակատար դերբայ

☐ **ուրախանալու** – անորոշ դերբայ, սեռական հոլով

☐ **համար** – կապ, հետադրություն

59. *Կապույտ գրվածները նախադասության ինչ անդամներ են:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

Վեցերորդ հատվածին վերաբերող առաջադրանքներ

Իսկ դեռատի ծառը, որ տարին բոլոր ուրախացնում էր ամենքին, հիմա չորս պատերի մեջ մեռնում է զարդարված...
Եվ քանի՞ հազարավորներ այդպես...

60. *Լրացրո՛ւ պակասող տառերը: Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողնված տեղում* **դ** *գրվում:*

☐ Զար...արյան, լաջվար..., խորդուբոր...
☐ եր...ում, ար...արամիտ, որ...ատունկ
☐ զար...անախշ, անջր...ի, նյար...աբան
☐ արձակուր..., զար...ոնք, լյար...

61. *Ի՞նչ է նշանակում* **դեռատի** *բառը:*

☐ մատաղահաս, մատղաշ
☐ կանաչազգեստ, մշտադալար

62. *Կարո՞ղ ենք ասել, որ* **մեռնել** *և* **հարություն առնել** *հականիշներ են:*

☐ այո ☐ ոչ

63. **Չորս**-*ը ինչ թվական է:*

☐ քանակական, բացարձակ
☐ քանակական, բաշխական
☐ քանակական, կոտորակային
☐ դասական

64. *Կարո՞ղ ենք ասել, որ* **քանի՞**-*ն հարցական դերանուն է:*

☐ այո ☐ ոչ

65. *Ինչպե՞ս կբացատրես հետևյալ կապակցությունները:*

ա) **տարին բոլոր** .....
բ) **չորս պատերի մեջ** .....

66. *Եթե ունենք բույս անվանող* **հազար** *գոյականը և* **հազար** *թվականը, ապա դրանք ինչ բառեր են:*

☐ հոմանիշ ☐ հականիշ
☐ համանուն ☐ բազմիմաստ

67. *Ինչ ածանցներ ունեն հետևյալ բայերը:*

ա) **ուրախացնում էր** .....
բ) **մեռնում է** .....
գ) **զարդարված** .....

68. *Նախադասության ինչ անդամ են:*

ա) **դեռատի** .....
բ) **տարին բոլոր** .....
գ) **հիմա** .....
դ) **զարդարված** .....

69. *Հատվածի առաջին նախադասությունը կազմությամբ ինչպիսին է:*

.....

70. *Կապույտ գրված երկրորդական նախադասությունն ինչ շարադասություն ունի:*

.....

71. *Կապույտ գրված նախադասությունն ինչպես է կապակցվել գլխավորին:*

.....

72. *Կապույտ գրված նախադասությունը գլխավորի ո՞ր բառին է կապակցվել և ինչ է ցույց տալիս:*

.....

73. *Ճիշտ է արդյոք* **դեռատի աղջիկ** *բառակապակցությունը:*

☐ այո ☐ ոչ

Հարցարան 9

1. Լռություն կա Կաքավաբեր...ի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հ...կում հունի կապույտ որ...աքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փ...փու...ի տակ ոռնում են հազար գամփ...ներ և կ...ծում քարե շ...թաները:

2. Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը՝ կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները՝ պողպատե զրահ:

3. Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը՝ կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են և երբ ամառը ծածկում են քար ու պարիսպ մանուշակը թեքվում է գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին մանուշակը ձոնք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

4. Ներքևը՝ ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ: Շոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական հորանջում է տան ստվերում, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփրում գլխով անցածը:

5. Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են:

Ա. Բակունց, «Ալպիական մանուշակ»

Ամբողջ տեքստին վերաբերող առաջադրանքներ

1. *Այս տեքստն ինչպիսին է*

☐ նկարագրական
☐ դատողական

2. *Բնագրում գործածված ո՛ր բառի բացատրությունն է սխալ:*

☐ **երդիկ** - բացվածք տան կտուրի մեջ, որ ծառայում է իբրև լուսամուտ և օդանցք
☐ **որձաքար** – շատ կարծր քար
☐ **ալպիական** - բարձրլեռնային
☐ **ցին** - շուշանազգիների ընտանիքին պատկանող բույս

3. *Տեքստի բոլոր նախադասություններն ըստ հաղորդակցման նպատակի ինչպիսին են:*

_____

4. *Նկարագրիր բնության մի տեսարան:*

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Առաջին պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

1) Լռություն կա Կաքավաբեր...ի ավերակներում: 2) Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հ...կում հունի կապույտ որ...աքարը: 3) Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փ...փու...ի տակ ոռնում են հազար գամփ...ներ և կ....ծում քարե շ...թաները:

5. *Լրացրո՛ւ պարբերության կապույտ գրված բառերի բաց թողնված տառերը:*

6. *Ո՞ր բառի վանկերի քանակն է սխալ գրված:*

☐ լռություն - 3 ☐ գալարվել - 3
☐ աղմկել - 2 ☐ միայն - 2

7. *Կարո՞ղ ենք ասել, որ* **ասես** *և* **կարծես** *բառերը հոմանիշներ են:*

☐ այո ☐ ոչ

8. *Գրիր* **աղմկել** *բայի հականիշը:*

.....

9. *Տեքստից ընտրիր և համապատասխան տեղում գրիր անհրաժեշտ 1-ական բառ:*

☐ պարզ բառ.....
☐ վերջածանցավոր բառ.....
☐ հոդակապավոր բարդ բառ.....
☐ անհոդակապ բարդ բառ.....

10. **Հազար** *բառը բնագրում ո՞ր նշանակությամբ է գործածվել:*

☐ թվականի՝ *«տասն անգամ հարյուր»*
☐ ածականի՝ *«շատ մեծ քանակությամբ»*

11. *Ո՞ր հոլովման է պատկանում* **լություն** *գոյականը:*

☐ **ա** ներքին ☐ **ան** արտաքին

12. *Ձևաբանական ո՞ր վերլուծությունն է սխալ:*

☐ **Իր**-ը անձնական դերանուն է, սեռական հոլով:
☐ **Մեջ** և **տակ** բառերը կապեր են:
☐ **Եվ**-ը ստորադասական շաղկապ է:
☐ **Միայն**-ը սահմանափակման վերաբերական է:

13. *Ո՞րն է ճիշտ:*

☐ բոլոր ստորոգյալները սահմանական եղանակի ներկա ժամանակով են դրված:
☐ բոլոր ստորոգյալները սահմանական եղանակի անցյալ ժամանակով են դրված:
☐ բոլոր ստորոգյալները սահմանական եղանակի ներկա ժամանակով են դրված, բացի մեկից:
☐ յոթ ստորոգյալներից հինգը ներկա ժամանակով են դրված, մեկը՝ անցյալ ժամանակով, մեկը՝ ապառնի:

14. *Կազմությամբ ինչպիսին է երկրորդ նախադասությունը:*

.....

15. *Երկրորդ նախադասության բաղադրիչ նախադասություններն ինչպես են կապակցվել:*

ա) ..... բ) .....

16. *Հատվածից ընտրիր և 1-ական օրինակ գրիր համապատասխան տեղում:*

ա) հատկացուցիչ .....
բ) որոշիչ .....
գ) ուղիղ խնդիր .....
դ) տեղի պարագա .....

Երկրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

1) Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: 2) Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: 3) Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը՝ կեռ բուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները՝ պողպատե զրահ:

17. *Ո՞ր բառում գաղտնավանկ չկա:*

☐ **կռնչյուն** ☐ **բարձրանալ** ☐ **սրածայր** ☐ **զրահ**

18. *Պարբերությունից դո՛ւրս գրիր՝*

ա) **ահավոր** բառի հոմանիշը .....

բ) **ձիրան, ճանկ** բառերի հոմանիշը .....

19. *Դեմ դիմաց գրիր պարբերության մեջ գործածված հոմանիշ բառերը:*

.....

20. *Դո՛ւրս գրիր նույն վերջածանցն ունեցող երկու բառերը:*

.....

21. *Բառակազմական ո՞ր վերլուծությունն է սխալ:*

☐ **բերդ** – պարզ բառ

☐ **կռնչյուն** – ածանցավոր բառ

☐ **նիզակ** – ածանցավոր բառ

☐ **սրածայր** – բարդ բառ, հոդակապավոր

22. *Կազմիր կապույտ գրված գոյականների հոգնակիի ձևերը:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

23. **Թռչել** *բայի խոնարհված ձևերից ո՞րն է սխալ:*

☐ **թռա** ☐ **թռչել է**

☐ **թռչում ենք** ☐ **պիտի թռչենք**

24. *Գրիր* **բույն են դրել** *բայի անորոշ դերբայը:*

.....

25. *Դո՛ւրս գրիր պարբերության մեջ հանդիպող տեղի պարագաները:*

ա) .....

բ) .....

գ) .....

դ) .....

26. *Երրորդ նախադասության մեջ երեք բութ է դրվել, որովհետև՝*

☐ տրոհվող հատկացուցիչներ են

☐ հետադաս ծավալուն որոշիչներ են

☐ բաղադրյալ ստորոգյալների բայական բաղադրիչները զեղչ-վել են

☐ բուն բացահայտիչներ են

27. **Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում** *երկրորդական նախադասությունն ինչ պաշտոն ունի:*

.....

28. *Փոխիր երկրորդական նախադասության շարադասությունը՝ այն դարձնելով հետադաս:*

.....

.....

.....

.....

Երրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը՝ կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ մանուշակը թեքվում է գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

29. *Լրացրո՛ւ կապույտ գրված նախադասության բաց թողնված կետադրական նշանները:*

30. *Ո՞ր բառի արտասանությունը չի համապատասխանում գրությանը:*

☐ բարձունք ☐ ոտք
☐ պարիսպ ☐ թաթախված

31. *Ո՞ր բառը հոմանիշ չէ* **կարմիր** *ածականին:*

☐ վարդագույն ☐ շառագույն
☐ բորբ ☐ բոսոր

32. *Գրիր* **բուրաստան** *բառի անհնչյունափոխ արմատը:*

.....

33. *Պարբերությունից դո՛ւրս գրիր բարդ բառ և բառակապակցություն, որոնք նույնանիշ են:*

.....

34. **Ծաղկափոշի** *բառը ո՞ր հոլովման է ենթարկվում:*

☐ **ի** հոլովման ☐ **ու** հոլովման

35. *Գրիր* **թվում է** *բայի անորոշ դերբայը:*

.....

36. *Նախադասության ինչ անդամներ են:*

ա) **Կաքավաբերդ** .....
բ) **ամպերը** .....
գ) **ալպիական** .....
դ) **միակ** .....
ե) **ծածկում են** .....

37. *ա) Դո՛ւրս գրիր պարբերության միակ դերբայական դարձվածը:*

.....

բ) Գրիր, թե նախադասության ինչ անդամի պաշտոն ունի այդ դերբայական դարձվածը:

.....

38. **Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ** *նախադասությունը կազմությամբ ինչպիսին է:*

.....

39. **Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին մանուշակը ձոնք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան** *նախադասության մեջ ինչո՞ւ է բութ դրվել:*

.....

40. **Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին մանուշակը ձոնք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան** *նախադասությունը ինչպիսի՞ բարդ նախադասություն է:*

.....

Չորրորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Ներքևը՝ ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ: Շոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական հորանջում է տան ստվերում, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփրում գլխով անցածը:

41. *Ո՞ր բառի արտասանությունն է համապատասխանում գրությանը:*

☐ երդիկ ☐ ձգվել

☐ շոգ ☐ կեսօր

42. *Կապույտ գրված բառերից որո՞նք են փոխաբերական իմաստով գործածվել:*

.....

43. *Ճիշտ է, որ* **աքլոր** *բառը նշանակում է՝*

1. աքաղաղ
2. (փոխաբերաբար) կռվասեր
3. (փոխաբերաբար) գոռոզ

☐ այո ☐ ոչ

44. *Բառակազմական ո՞ր վերլուծությունն է սխալ:*

☐ **կեսօր** – բարդ բառ, կցական

☐ **առավոտյան** – ածանցավոր բառ

☐ **շինական** – պարզ բառ

☐ **քարաժայռ** – բարդ բառ, հոդակապավոր

45. **Կապույտ** *արմատից բա՛ռ կազմիր այնպես, որ* **ույ**-*ը՝*

ա) հնչյունափոխվի **ու**-ի .....

բ) սղվի .....

46. *Այս պարբերության մեջ* **գլխով անցնել** *դարձվածքը ո՞ր իմաստով է գործածվել:*

☐ մի բանի մասին խորհել, մտածել
☐ որևէ բանի մասին կասկածել
☐ մեկի կյանքում տեղի ունենալ, պատահել (դեպք, իրադարձություն)

47. *Դո՛ւրս գրիր ներգոյական հոլովի ձևերը:*

ա) ..... բ) .....

48. *Որտեղ ձևաբանական վերլուծության սխալ կա:*

☐ **ափին** – գոյական, տրական հոլով
☐ **կեսօրին** – գոյական, տրական հոլով
☐ **տներ** – գոյական, ուղղական հոլով
☐ **նշաններ** – գոյական, ուղղական հոլով

49. *Պարբերությունից դո՛ւրս գրիր այն բայը, որը կազմվել է արմատի կրկնությամբ:*

.....

50. Ներքևը՝ ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա թառել են մի քանի տներ *նախադասության մեջ ինչո՞ւ է բութ դրվել:*

.....

51. *Պարբերության վերջին նախադասությունը բաղադրիչ քանի՞ նախադասությունից է կազմված:*

.....

52. *Վերջին նախադասության բաղադրիչ նախադասություններն ինչպե՞ս են կապակցվել:*

.....

Հինգերորդ պարբերությանը վերաբերող առաջադրանքներ

Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են:

53. **Գլուխ** *բառն ըստ իմաստի ինչպիսին է:*

☐ մենիմաստ ☐ բազմիմաստ

54. *Նախադասության ո՞ր անդամի պաշտոնն է սխալ ներկայացված:*

☐ **բերդի գլխին** – տեղի պարագա

☐ **դանդաղ** – ձևի պարագա

☐ **տարիները** – ուղիղ խնդիր

☐ **նույն** – որոշիչ

55. **Ե՛վ..., և՛** *շաղկապին հոմանիշ շաղկապ գրիր:*

.....

56. *Ինչպիսի ստորոգյալներ են:*

ա) **սահում են** .....

բ) **տերևներն են** .....

57. *Նախադասության մեջ* **սահում է**-*ն ինչ բայով կփոխարինես, որ իմաստը չխաթարվի:*

.....

58. **Տարիները նույն ծառի միանման տերևներն են.** *այստեղ համեմատություն կա՞:*

☐ այո ☐ ոչ